«Ա Զ Բ Ի Խ Ր Ի» Յ Ա Ի Ե Լ Ի Ա Ծ

ՏԱՐԱԶԸ ԼՈՅՏ Է ՏԵՍՆՈՒՄ ՇԱԲԱԹԸ ՄԻ ԱՆԳԱՄ ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐԸ

ՏԱՐԵԿԱՆ 50 ՀԱՄԱՐ

№ 43 Կիրակի 7 Նոյեմբերի | Չորրորդ տարի 1893

ՍԱՆԱՍԱՐԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ

—

Ահա ինչ գոյներով է նկարագրում «Հայբենիք» լրագիրը Սանասարեան վարժարանը.

«Սանասարեան վարժարանը ամենէն աւելի հոգածուներով շրջապատուած հաստատութիւն մըն է. կան մէկ երկու կտակատարներ, որք հսկելու իրաւունքն ունին, կայ տեսչութիւն մը, որ մասնաւորապէս պատրաստուած է այդ վարժարանին համար, կայ հոգաբարձութիւն մը, որ կը ներկայացնէ Պոլսոյ խնամակալութիւնը։ Եւ սակայն այս ամեն հոգատարները չեն կրնար այդ վարժարանին տալ այնպիսի ուղղութիւն մը, որ դէթ ընդհանուր դժգոհութիւն չպատճառէ։

Հոգեբանական շատ հետաքրքիր ուսումնասիրութիւն մը պիտի ըլլար քննել թէ ինչպէս կ'ըլլայ որ այնքան երկար նախապատրաստական աշխատութիւններով հիմնուած վարժարան մը կընդերկայացնէ այս վիճակը։ Երիտասարդներ եւրոպական համալսարաններու մէջ ժամանակով պատրաստուած են տեսուչ, ուսուցիչ ըլլալու, կարևոր դրամագլուխ մը կ'ապահովէ հաստատութեան կեանքը. թոշակաւոր աշակերտները հասոյթի աղբիւր են, ազգը համակրանք ու սէր կըտածէ այդ վարժարանին, և սակայն մենք միշտ պարտաւոր ենք տխուր արձանագրութիւններ ընել։

Այս ամենը արդեօք Պոլսոյ խնամակալութեան համար մտածելու առարկայ եղած է։ Եթէ իրապէս կը փափագին սիրելի պահել Սանասարեանի անունը և հիմնարկութեամբ ծառայութիւն մը մատուցանել մեր կրթութեանը, թող հիմնովին քննեն Սանասարեան վարժարանի մէջ տիրապետող կրթական ոգին։

Դրական ուղղութեան բացակայութիւնը գլխաւոր պատճառ մըն է որ տղոց սիրտը վհատ զգացումներով չտոգորիր. չենք սխալիր նաև ըսելով թէ կեղծ, թ ա ր թ ի ֆ ա կ ա ն ոգի մը ամեն տեղ բաւական կընպաստէ արգիլնաւորելու վատ կրքերու ծլիլը։

—

Մօտէն աւելի մեծ քննութիւն մը ընելու պէտք կայ և թերևս տեսչական մարմինն ալ փոխելու. Հարկն անհրաժեշտ ըլլայ։ Մինչև հիմա ինչպէս ամեն հաստատութիւններու, նոյն և Սանասարեանին համար ալ միայն թմբուկ կար, բայց ժամանակը երևան կը հանէ տխուր ճշմարտութիւնը։

Սանասարեանի նախկին աշակերտ մը այս առթիւ կը գրէ մեզ.

—Սանասարեան վարժարանի երեք տեսուչները իրանց «պատուհանը» գոց կը պահէին թերթերու առջև, ներքինը չի տեսնելու համար, և արտա-

քինը ի տես կըդնէին ժողովրդին։ Քանի՛ քանի՛ այցելուներ խաբուած են Սանասարեանի արտաքին շքեղ երեւոյթէն։ Թող ըսեն ամեն անոնք, որք գացած պտտած են այդ վարժարանը, թէ արտաքինը տեսնելէ վերջ ներքինին ալ տեղեկացեր են, և կամ երթէ ուզեր են տեղեկանալ, տեսուչները ինչ միջոցներով իրանց փափաքը գոհացուցեր են։ Գիտեմ որ պատասխանը աննպաստ պիտի ըլլայ, որովհետեւ այցելուները ճոխ և գեղեցիկ թանգարան մը, հարուստ մատենադարան մը, արուեստանոց մը և վերջապէս ճաշակաւոր գեղեցիկ պարտէզներ ու հրապուրիչ երաժշտութիւն մը լսելէ վերջ ճամբու դրած են։ Եթէ ներքինը հարցնէք, ահա այլ և այլ անպատեհութիւններ կընկերակայանան, որով անկարելի կըլլայ գաղափար մը կազմել աշակերտներու վիճակին վրայ։ Եւ այսպիսի մեքենայութիւններու զոհ եղողներն են որ կ'ելլեն կըխօսին, կըգրեն Սանասարեանի մեծ մեծ առաւելութիւններու մասին, և կոյր հաւատք մը կըտարածեն ժողովրդեան մէջ։—

Ասոնցմէ դուրս շատ մը բաներ ալ գրուեցան, հրատարակուեցան բայց միշտ միևնոյն աղբիւրներէն։ Այս էջերուն մէջ միայն ծածկոյթը վեր առնուեցաւ թէև միշտ զգոյշ ձեռքերով։

Ինչ որ ալ ըլլան դրատիքները, շռայլուած գովեստները, բայց և այնպէս հասած պտուղները ցոյց կուտան թէ ծառը հիւանդ է, ու դարմանի պէտք կայ։

Կտակին մանրամասնութիւններուն, կտակատարներուն իրաւասութեանց, խնամակալներու հսկողութեան իրաւունքի խնդիրներուն մէջ չենք մտներ, միայն սա չափը կրնանք ըսել թէ կտակատարներն ու խնամակալութիւնը լրջօրէն մտածելու են հիմնական բարեփոխութեան մը համար, երթէ չեն ուզեր որ Սանասարեանի գործը քանդուի։

Խելացի, հոգեբան քննիչի մը այցելութիւնը կարեւոր կըհամարինք»։

ԿԻՆ ԹԷ՞ ՎԱԳՐ

Ամերիկացի Ֆ. Ո. Ստոկտոնի

ԵՐԿԱՐԱԴ ԶՐՈՅՑ *)

—

«Արքայական ամփիթատրոնի» վրայ կատարուած դէպքից մէկ տարի յետոյ մի հեռաւոր թագաւորութիւնից դեսպաններ եկան թագաւորանիստ քաղաքը և պալատի նախարարը ընդունեց նրանց հանդիսաւոր կերպով։ Ընդունելութեան ժամանակ դեսպանութեան գլուխը դիմեց նախարարին հետևեալ ճառով. «Բարձրապատիւ պարոն. մեր հզօր արքան և իշխանն ուղարկեց մեզ ձեր մեծ արքայի մօտ իր բարձր յարգանքը և եղբայրական սէրը վկայելու համար։ Միևնոյն ժամանակ նա պատւիրեց մեզ իմանալ այստեղ տեղի ունեցած արտակարգ դէպքի վախճանը, որ սաստիկ հետաքրքրել է մեր հարցասէր արքային։ Մեր հայրենակիցներից մէկը պատահմամբ գտնուում էր ձեր մայրաքաղաքում այն արժանայիշատակ օրը, երբ այն երիտասարդ պալատականը, որն յանդգնել էր իր հայեացքը բարձրացնել ձեր իմաստուն արքայի ազնւատոհմ դստեր վրայ և դիւթել նրան սիրոյ հրապոյրներով, դատապարտուած էր բանալու ամբողջ ժողովրդի ներկայութեամբ, արքայական ասպարէզի վրայ, երկու խորհրդաւոր դռներից մէկը, որի մէջ նրան պիտի առաջ գար կամ արիւնարբու վագրը կամ՝ հրապուրիչ-գեղեցկուհի Հարսնացուն։ Գտնուելով բազմամարդ ամբոխի մէջ, այդ մեր հայրենակիցը, որ վերին աստիճանի դիւրազգաց և նեարդային մարդ է, սպասելով այդ սարսափելի տեսարանին այնպիսի սաստիկ յուզմունքի մէջ էր, որ հէնց այն րոպէին, երբ այն պատանին համարձակ դիմեց այն ճակատագրական դռներին, նա սարսափահար դուրս վազեց արքայական ամփիթատրոնից, թռաւ ձիու վրայ և որքան ոյժ ուներ չափ տւեց դէպի իր հայրենիքը։ Նրա պատմութիւնը գրգռեց մեր իշխանի չափազանց հետաքրքրութիւնը և ահա մենք ուղարկուած ենք այստեղ իմանալու, ո՛վ դուրս եկաւ այն ժամանակ բաց արած դռնից, կին թէ վագր։

—Մեծայարգ պարոններ, պատասխանեց նախարարը, նախ քան այն հարցին պատասխանեմ, որի պատճառով դուք յանձն էք առել՝ այսպիսի հեռաւոր ճանապարհորդութիւն, ես պէտք է ձեզ պատմեմ մի անցք, որ տեղի ունեցաւ մեզ մօտ ձեր պատմած դէպքից յետոյ—շատ շուտով։ Մեր իմաստուն արքայի ամբողջ թագաւորութեան մէջ և նոյն իսկ մեր սահմաններից շատ հեռու ամենքին քաջ յայտնի է որ մեր մեծ արքան կանացի գեղեցկութեան մեծ սիրահար է ու երկրպագու և այդ պատճառով արքայատիկնոջ և դստեր սւիտակի մէջ հաւաքւած են երկրի բոլոր ծայրերից ամենագեղեցիկ և ամենահրապուրիչ ջահել օրիորդները։ Մեր արքայի պալատը զարդարող հազւագիւտ գեղեցկուհիների մեծ քանակութիւնը, թա-

*) «Տարազի» № 41-ի մէջ տպագրւած առաջին զրոյցի բնագիրը լոյս է տեսել սրանից տասը տարի առաջ, և տեղի է ունէլ բազմաթիւ հետաքրքրական վիճաբանութիւններ։ Այս երկրորդ զրոյցը գրւած է անցեալ տարւայ վերջերին։

դաւորի խորին իմաստութիւնը, նրա խիստ արդարասիրութիւնը և անկողմնապահութիւնը պատճառ եղան, որ մեր պալատը հրապուրիչ դարձաւ բազմաթիւ ազնւատոհմ ճանապարհորդների համար։ Մօտ ժամանակներս եկաւ մեզ մօտ մի երիտասարդ արքայազն ամենաազնիւ և հռչակաւոր ցեղից, նա ամենքին զմայլեցնում էր իր արի տեսքով և վեհ ու հպարտ քայլուածքով։ Մեր արքան ընդունեց նրան ողորմածաբար և հարցրեց նրա ճանապարհորդութեան նպատակը։

—Ձերդ մեծութիւն, պատասխանեց արքայազնը, ձեր պալատը շրջապատող արտակարգ գեղեցկութիւնների հռչակը հասաւ և մեր հեռաւոր երկիրը, և ես եկայ այստեղ այն նպատակով, որպէս զի նրանց միջից ընտրեմ ինձ համար հարսնացու։

Այս յանդուգն պատասխանից թագաւորի դէմքը մռայլւեց, նրա ճակատի չիզը ցնցւեց և նա անհամբեր կերպով շարժւեց գահի վրայ. այս ամենը նախազուշակում էր մի սաստիկ փոթորիկ, որ մի րոպէի մէջ կարող էր վճռել չարաբաստիկ արքայազնի ճակատագիրը, բայց թագաւորը յանկարծ զսպեց իրան և դիմելով արքայազնին ասաց.

—Ինչ յանդգնութիւնը կրկատարւի. վաղը կէս օրին դու պակաս կըլինես պալատիս ամենագեղեցիկ նաժիշտի հետ։ Յոյց տւէք ազնիւ արքայազնին նրա համար պատրաստած ապարանքները, դիմեց նա պալատականներին, դրէք իր տրամադրութեան ներքոյ ամենաթանկագին զգեստները, զրահները և զարդերը, որպէս զի վաղը կարողանայ ինչպէս հարկն է երևալ Հանդիսին...

—Բայց, ձերդ մեծութիւն, ընդդիմախօսեց արքայազնը, առաջ քան ի կատար կածւեն այդ կարգադրութիւնները, ես կըցանկայի...

—Այլ ևս ոչ մի խօսք... բարկութեամբ բացագանչեց թագաւորը. իմ հրամանը դու լսեցիր, դու ողորմութիւն էիր խնդրում և քեզ կը տրւի։ Յուսութիւն, արքայազն, վաղը կէսօրին մենք կրտեսնւենք։

Թագաւորը տեղից բարձրացաւ և թողեց դահաւոր դահլիճը, իսկ արքայազնին տարան նրա համար նշանակւած ապարանքը, ուր պալատական դերձակները, վարսաւէրները և ականագործներն իսկոյն սկսեցին պատրաստել նրա համար ամենաշքեղ հարսանեաց հանդերձեղէն։

Արքայազնը չափազանց շփոթւած էր, նա բոլորովին չէր սպասում գործի այս ընթացքին։

— Ես չեմ կարող հասկանալ թագաւորի այսպիսի աճապարանքը, դարձաւ նա իրան շրջապատողներին։ Ե՞րբ թագաւորը ժամանակ կունենայ ներկայացնել ինձ պալատական բոլոր նաժիշտներին, որպէս զի ես նրանց միջից իմ ճաշակի և հակումի համաձայն ընտրեմ կին։

—Այդ մեր գործը չէ, լսեց նա պատասխան։ Թագաւորը գործում է այնպէս, ինչպէս խելացի է գտնում, և մեզ մնում է միայն հնազանդւել։

—Ձեր թագաւորի կարգադրութիւնները շատ տարօրինակ են և ինձ բոլորովին հաճելի չեն, ասաց բարկացած արքայազնը։

Այդ իսկ ժամանակ նրան մօտեցաւ մի անձ, որին նա մինչև այդ ժամանակ չէր նկատել իր շրջապատողների մէջ։ Այդ մի բարձրահասակ, յաղթանդամ, լայնաթիկունք այր մարդ էր, գազանանմաև դէմքով և ձեռին ահագին մերկացրած թուր։

—Դու ո՞վ ես, հարցրեց արքայազնը, ակամայ ետ քաշւելով այդ արհաւիրքի տեսքից։

—Ես, պատասխանեց նա, ինքնաբաւական կերպով ժպտալով.—ես «տրտնջողների սանձահարողն եմ»։ Երբ մեր թագաւորը մի որևէ հրաման է արձակում, որ վերաբերում է նրա հպատակին կամ նորեկ օտարականին, ես լոյս եմ ընկնում այդ մարդու մօտ և ստւերի պէս հետևում եմ նրան։ Եթէ նա մտքումն ունի չըհնազանդւել այդ հրամանին, բաւական է որ ինձ նայէ,—և այդ միտքըն իսկոյն կանհետանայ։ Սրդեօք չէք բարեհաճել, ազնւատոհմ արքայազն, փորձել այս թրի արժանաւորութիւնը։ Այդ ասելով նա մեկ մազ պոկեց իր գլխի վրայից, դրեց նրան թրի ծայրին, փըչեց նրա վրայ և մազն երկու մասի կիսւեց։ Արքայազնը՝ տեսնելով այս, անտրտունջ հնազանդւեց իր ճակատագրին։

Միւս օրը կէսօրին արքայազնը շքեղ հարսանեաց զգեստով ներս էր բերւած գահաւոր դահլիճը, ուր նստած էր թագաւորը շրջապատւած վսեմաշուք և բազմաթիւ ուխտայով։

—Ձերդ մեծութիւն, ասաց արքայազնը, նախ քան ձեռնամուխ լինել... բայց նրա ճառն ընդհատեց մօտեցած պալատականը, որ երկայն մետաքսէ թաշկինակով կապեց արքայազնի աչքերը և բերանը, թաշկինակի ծայրերն ամրացրեց գլխի ետևը և հեռացաւ։ Արքայազնը ոչինչ չէր տեսնում և չէր շնչում։ Կատաղած այդպիսի վարուղութիւնից, նա բարձրացրեց ձեռքն այս աչքակապը վայր ձգելու նպատակով, բայց այդ իսկ րոպէին լսեց սանձահարողի ձայնը՝ ես այստեղ եմ, արքայազն, և նա սարսափահար իջեցրեց բարձրացրած ձեռքը։ Այդ միևնոյն ժամանակ արքայազնի ականջին հասաւ քուրմի ձայնը, որ սկսել էր արդէն պսակադրութեան ծիսակատարութիւնը և նրա

կողքին սօսափեց մետաքսէ զգեստը։ Երբ քուրմն առաջարկեց նրան թէ՝ մեկնիր աչը կողքիդ կանգնած կնոջը, նա զգաց իր ափի մէջ փոքրիկ, նուրբ և փափուկ ձեռք և նրան ընդգրկեց ախորժելի ցընյում, և երբ քուրմը հարցրեց հարսնացուին՝ արդեօք կամենում է նա իրան ամուսին առնել կողքին կանգնած արքայազնին — սրտագրաւ և հնչուն ձայնը կամաց պատասխանեց՝ այո։

Արիւնը լցւեց արքայազնի սրտում։ Փափուկ ձեռքը և հնչուն մեղեդիական ձայնը յանկարծ դիւթեցին նրան և երբ քուրմը դիմեց նրան մեկնոյն հարցով, նա պատասխանեց որքան որ թոյլ էր տալիս նրան կապը, բարձր և վճռողական կերպով՝ այո։ Քուրմը յայտարարեց, որ պսակադրութիւնն արդէն վերջացած է և օրհնեց նորապսակներին։ Արքայազնի շուրջը մի փոքրիկ աղմուկ բարձրացաւ, կապն ընկաւ նրա աչքերից և նա արագ ետ դարձաւ տեսնելու նրան, որի հետ նա այժմ կապւած է ամբողջ կեանքի ընթացքում — բայց աւաղ, նա միայնակ էր, ամբողջ դահլիճի մէջ չէկար ոչ մի կանացի կերպարանք։ Արքայազնը կանգնած էր շանթահարի պէս, անկարող մի խօսք անգամ արտասանելու։

Թագաւորն իջաւ գահից և բռնեց արքայազնի աջը։

— Ո՞ւր է իմ կինը, բացագանչեց արքայազնը։

— Այստեղ է; ասաց թագաւորը և մօտեցրեց նրան դահլիճի մի դռանը, որ պալատականները բոլորովին բաց արին։ Նրանք մտան մի երկայն սրահ, որ զարդարւած էր աչքի ընկնող շքեղութեամբ և լցւած էր հազւագիւտ բոյսերով և ծաղիկներով։ Դիմացի պատի տակ նստած էին շարքով քառասուն չահճեղ գեղեցկուհիներ շքեղ զգեստներով — բոլորն էլ զմայլեցնում էին իրանց երիտասարդութեամբ, գեղեցկութեամբ և նրբութեամբ։

— Մօտեցիր աւելի, արքայազն, ասաց թագաւորը մատնացոյց անելով գեղեցկուհիների այդ շարքի վրայ, և գտիր դրանց մէջ քո կնոջը։ Բայց վայ քեզ, եթէ դու ձեռդ մեկնել ես ոչ այն նաժիշտին, որի հետ դու այս րոպէիս պսակւած էիր։ Դու իսկոյն և եթ մահապարտ կըլինես։ Մի ուշանար, գնա և դուրս բեր այդ շարքից քո օրինաւոր կնոջը։

Մտամոլոր գլխով, սաստիկ բաբախող սրտով արքայազնը անցաւ նստած գեղեցկուհիների շարքով և վերադարձաւ ետ։ Նա նրանց մէջ չը նկատեց չնչին տարբերութիւն։ Նրանց զգեստները բոլորովին միատեսակ էին, բոլորն էլ նրա մօտենալուն պէս համեստութեամբ նայում էին նրան և իսկոյն եթ իջեցնում էին հայեացքը։ բոլորն էլ ունէին փոքրիկ սպիտակ ձեռներ. ոչ մէկը չարտասանեց ոչ մի խօսք։

— Արդեօք երկար պիտի սպասել տաս, — գոռաց թագաւորը։ Ով որ պսակւած է այնպիսի քնքոյշ և հրապուրիչ աղջկայ հետ, նա պիտի կարողանայ գտնել իր կնոջը, մինչև անգամ հազարների միջից։

Բոլորովին շփոթւած արքայազնը էլի մեկ անգամ անցաւ գեղեցկուհիների այդ փարթամ շարքը և այս անգամ նա նկատեց արդէն մի փոքրիկ փոփոխութիւն։ Դիւթիչ նաժիշտներից մեկի դէմքին նա նկատեց արագանցիկ քաղցր ժպիտ, իսկ միւսի՝ ոչ պակաս գեղանի կոյսի դէմքին նշմարւում էր ակներև բարկացած արտայայտութիւն։

— Որ ես պսակւած եմ այս երկուսից մեկի հետ, — խորհրդածում էր արքայազնը, — այդ անկասկած է, բայց ո՞րի հետ արդեօք։ Մեկը սրանցից ժպտաց. ամեն մի կին պիտի, ըստ երևոյթին, ժպտայ, երբ իրան մօտենում է իր ամուսինը, որի հետ նա մի ժամ առաջ պսակւել է։ Բայց միւս կողմից՝ ներկայ դէպքում, ժպիտը կարող է լինել ուրախութեան ակամայ արտայայտութիւն, որ երիտասարդը անցաւ իր առջևով չընտրելով իրան, և որ ինքը չի դառնալ ակամայ պատճառ նրա կորստեան։ Այնուհետև, արդեօք չըպիտի բարկանայ ամեն մի կին, երբ իր երիտասարդ ամուսինը անցնում է մօտով և նրա սիրտը մատնացոյց չէ անում՝ ո՞րն է իր կինը։ Բայց մեկնոյն ժամանակ կարելի է նաև ենթադրել, որ նա, չըլինելով այդ երիտասարդի կին, կարող էր բարկանալ այն պատճառով, որ նա նայում էր իր վրայ և կորցնում էր թանկագին ժամանակը, մի՛ւդեռ նրա իսկական կինը նստած էր այդտեղ և եթ կամ երկու քայլ հեռու։

Բացի դրանից այստեղ կարելի է այլ ևս մեկ բան ենթադրել. պսակադրութեան հանդիսին կինս չէր տեսնում իմ դէմքս, այժմ տեսնելով ինձ, նա կարող է ժպտալ զւարճութիւնից, եթէ իմ դէմքը իրան դուր է եկել, կամ կարող է բարկանալ, եթէ ես չեմ համապատասխանում իր պահանջներին ամուսնու գեղեցկութեան նկատմամբ։ Կնոջ ժպիտը կարելի է բացատրել երբեմն յորդորանք, բայց և նրա բարկութիւնը կարող է արտայայտել նախատինք անվճռականութեան համար։ Ի՞նչ անել։

— Լսիր, արքայազն, բացագանչեց թագաւորը, եթէ դու այլ ևս հինգ րոպէի մէջ չես դուրս բերիլ այս շարքից քո կնոջը, ազնիւ խօսք եմ տալիս քեզ, որ հետևեալ հինգ րոպէում հէնց այդ քո կինը կըլինի արդէն այլի։

Զայկովսկի.

Եւ կարծես թէ այս խօսքերը հաստատելու համար արքայազնին մօտեցաւ այն սարսափելի «սանձահարողը» և շշնջաց նրա ականջին.

—Ես այստեղ եմ, արքայազն։

Արքայազնը տեսնելով որ ամեն մի րոպէն թանգ է, համարձակ մօտեցաւ իր նկատած նաժիշտներից մէկին և ձեռքը մեկնեց։ Այս վայրկեանից լսեցին երաժշտութեան խլացնող ձայները և բոլոր շրջապատողների բարձրաձայն կեցցէները։ Թագաւորը մօտեցաւ արքայազնին, գրկեց նրան և շնորհաւորեց որ նրա զգայուն սիրտը ցոյց տւեց նրան իր իսկական կնոջը։

—Եւ այժմ, մեծարգոյ պարոնները, վերջացրեց իր պատմութիւնը նախարարը,—դուք ինձ ասեցէք՝ նաժիշտներից որին ընտրեց արքայազնը, նրան, որ ժպտում էր, թէ նրան, որը բարկանում էր,—այն ժամանակ ես կըհաղորդեմ ձեզ թէ ով դուրս եկաւ այն անգամ արքայական ամփիթեատրոնի բացարած դռնից—կին թէ վագր։

—

Որչափ յայտնի է, այդ դեպքանութեան անդամները մինչև օրս էլ դեռ վիճում են իրար մէջ այս հարցի մասին, և ոչ մի կերպով չեն կարողանում միաձայն մի վճռի հանգչել *)։

***

* *

Տիեզերքի սերճ հիւսւածքն եմ—
Իմ մէջ երկինքն է երգում,
Բռնկւում է սիրոյ հրդեհն,
Վշտի հեղեղն աղմկում...

—

Եթէ հոգուս ճոխ երգերից
Մի մեղմ հնչիւն, նազելիս,
Ձո ականջը միայն շոյէ,—
Հիացքներով կըդիւթւիս։

—

Եթէ սիրոյս վառ հրդեհից
Մի նսեմ կայծ, սևաչեայ,
Լուռ սրտումդ միայն շողայ,—
Բուռն յոյզերով կ'այրւիս։

—

Եթէ վշտիս ջերմ հեղեղից
Մի ջինջ կաթիլ, սիրելիս,
Զքնաղ կրծքիդ մէյն ծորէ,—
Սև վշտերով կըլցւիս...

—

Տիեզերքի սերճ հիւսւածքն եմ,—
Իմ մէջ երկինքն է երգում,
Բռնկւում է սիրոյ հրդեհն,
Վշտի հեղեղն աղմկում...

Ա.Ի. ԻՍԱՀԱԿԵԱՆ

1893. 28 օգոստոսի,
Վիէննա.

Ա. ՅՐՈՂ ՀԱՐՑԵՐ *)

II

Յանկանալով աւելի տարածել, աւելի մեծ շրջանի մտածման և ուշադրութեան առարկայ շինել իր մտքերը՝ Բիէրնսօնը նրանց արտայայտում է մի ուրիշ՝ համեմատաբար աւելի մատչելի կերպով՝ իր «Գեռնոց» կոմեդիայի միջոցով։ Այդ կոմեդիան հիմնւած է ահա թէ ինչի վրայ. օրիորդը՝ իմանալով, որ իր ձեռքը խնդրող երիտասարդը իրանից առաջ ունեցել է յարաբերութիւն մի ուրիշ կնոջ հետ՝ մերժում է նրան իր ձեռքը և շշպրտում է նրա երեսին իր ձեռնոցը։ Պիէսի գլխաւոր հերոսուհին՝ որի բերանով խօսում է և հեղինակը՝ է օրիորդ Սվաւան՝ մի իդէալական տիպ։ Օրիորդը նշանւած է մի հարուստ, գեղեցիկ երիտասարդի՝ Ալֆայի հետ, որը մինչև այդ նշանադրութիւնն ունենում է այսպիսի մի ռոման. նա սիրահարւում է իրանց տանը բնակւող դաստիարակչուհու հետ և ունենում է նրա հետ գաղտնի կապ, բայց նրա ծնողները՝ կամենալով դրա առաջքն առնել, ուղարկում են նրան արտասահման՝ առևտրական գործով։ Վերադառնալով արտասահմանից՝ երիտասարդը գտնում է իր նախկին սիրուհուն ամուսնացած մի գործակատարի հետ. սակայն այդ արգելք չէ լինում նրանց առաջւայ յարաբերութիւնները շարունակելուն՝ առաւել որ տիկինը չի սիրում իր ամուսնուն, այլ հաւատարիմ է իր առաջւայ սիրոյն։ Բայց դա էլ երկար չի քաշում. տիկինը շուտով մեռնում է թոքախտից. իրան ազատ զգալով՝ Ալֆան առաջարկութիւն է անում օրիորդ Սվաւային, որ առաջ ընդունում է, իսկ յետոյ՝ իմանալով նրա ռոմանը՝ մերժում է և շպրտում է իր ձեռնոցը նրա երեսին։

Այս է պիէսի համառօտ բովանդակութիւնը, բայց մենք՝ չըբաւականանալով դրանով՝ քիչ երկար կըկանգնենք նրա վրայ։

Պիէսը սկսելիս մենք արդէն գիտենք, որ Սվաւան Ալֆայի հարսնացուն է, որ Սվաւան նը-

*) Առաջին զրոյցի մասին ընթերցողներից մի քանիսը արդէն յայտնել են մեզ իրանց կարծիքները՝ թէ ով դուրս եկաւ դռնից, կին թէ վագր։ Մենք սպասում ենք, որ այս զրոյցի առիթով էլ մեր ընթերցողները կըշտապեն իրանց կարծիքները հաղորդել մեզ։

Ծ. Խմբ.

*) Տես «Տարազ» № 41.

բան ընտրել է ոչ միայն այն պատճառով, որ նա հարուստ, հաստատամիտ, ամուր բնաւորութեան և գեղեցիկ երիտասարդ է, այլ գլխաւորապէս այն պատճառով, որ նա մ ա ք ու ր մարդ է։ Մ՛աքուր այնպէս, որպէս մաքուր է ինքն օրիորդը, որպէս պարտաւոր են լինել—ըստ օրիորդին—ամենքը՝ թէ տղամարդիկ, թէ կանայք մինչև ամուսնութեան րոպէն։ Հօրը հարցին՝ թէ ինչ է հասկանում նա՝ գործ ածելով այդ «մաքուր» խօսքը՝ օրիորդը պատասխանում է. «Ա՛յն, ինչ ամենքը,—ես այդ խօսքը գործ եմ ածում նոյն նշանակութեամբ, ինչ նշանակութեամբ գործ է ածւում այն ժամանակ, երբ խօսւում է օրինակի համար, իմ մասին»։ Ուրեմն օրիորդը պահանջում է երիտասարդից լիակատար ողջախոհութիւն և կուսութիւն մինչև ամուսնութեան րոպէն։—Ունի՞ արդեօք նա իրաւունք այդպիսի մի պահանջ յայտնելու և պարտաւո՞ր է արդեօք տղամարդը խոնարհւել այդ պահանջի առաջ։ Ըստ մեզ՝ երկու դէպքումն էլ՝ այո, եթէ մենք պարտաւոր ենք ընդունել և ընդունում ենք այն, որ մարդու և կնոջ իրաւունքները և դերերը պիտի միահաւասար լինեն կեանքի կուի մէջ, եթէ մենք ընդունում ենք, որ նրանք ընկերներ են միութեան րոպէից մինչև մահը, ինչո՞ւ չըպէտք է ընդունենք և այն, որ այդպիսի միութիւն կազմելու համար նրանք և մինչև ամուսնութիւնը պիտի լինեն բարոյապէս այն հաւասարակշռութեան մէջ, ինչպէս են ամուսնութիւնից յետոյ միւս հարցերի վերաբերմամբ։ Եթէ հաւասարութիւն է, հաւասարութիւնը պիտի լինի միշտ՝ թէ մինչև ամուսնանալը, թէ ամուսնանալուց յետոյ, մինչդեռ մեզանում, և որպէս ուղիղ նկատում է «Գեղնոցի» մէջ տիկին Բէյսը—«տղամարդիկ իւրացրել են իրանց սանձարձակ կեանքի լիակատար իրաւունքները, իսկ կեանքի մէջ մտնում են ոչ այդ դրօշակի ներքոյ կանգնած, խօսելով մաքրութեան և հաւատարմութեան մասին։ Եթէ նրանց դրօշակի վրայ գրած լինեը «սանձարձակ ամուրի կեանք», այն ժամանակ ամեն մի անմեղ աղջիկ կիմանար թէ ո՛ւր է գնում և ինչո՛ւ է գնում»։ Ի դէպս նայեցէք, թէ որպէս են կատարւում մեզ մօտ ամուսնութիւնները։ Մեզանում երիտասարդը (բացառութիւնը չնչին է) միայն այն ժամանակն է մտածում ամուսնութեան մասին, երբ նա արդէն բաւականաչափ խրւած է լինում անբարոյական ցեխի մէջ, երբ նա հասած է լինում այդ կեանքի այն սահմանին, որից յետոյ այլ ևս տեղ չըկայ քայլելու։ Ամուսնանալով՝ նա յոյս ունի բարոյապէս մաքրւել։ «Իսկապէս կարելի է կարծել—բացագանչում է օրիորդ Սվաւան «Գեղնոցի» մէջ, որ ամուսնութիւնը մի տեսակ լուացարարական օրինակելի գործարան է տղամարդկանց համար, որտեղ նրանց կարելի է բերել, երբ նրանք կըցանկանան»։ Ի՞նչ հաւասարութիւն և համերաշխ գործունէութիւն է կարող լինել այդպիսի մի երիտասարդի և անարատ, մաքուր և կեանքի մեծ գրքի մէջ միմիայն առաջի երեսների առաջի տողերը կարդացած օրիորդի մէջ... Բայց դարձրէք դրամի միւս կողմը. ապագայի զոյգը կրթւած է միանման հանգամանքների մէջ, շրջապատւած է միանման հասարակութեամբ, հետաքրքրւում է միանման հարցերով, երկուսն էլ անարատ, երկուսն էլ մաքուր խղճով և ուրախ հայեացքով են սկսում այդ նոր կեանքը.—որպիսի՞ նախանձելի և երանութեան արժանի զոյգ...

Բայց դառնանք սիէէսին։ Օրիորդն ուրախ և երջանիկ է. նա սիրում է և սիրւում է մի երիտասարդից, որ «մաքուր» է, որ իբր թէ իրանից առաջ ուրիշ կնոջ չէ մօտեցել։ Բայց այդ ուրախութիւնն երկար չի քաշում. նոյն իսկ առաջի գործողութեան վերջումն օրիորդը իմանում է իր ընտրեալին պատահած ռոմանը, և այստեղից սկսած ամեն ինչ տակ ու վրայ է լինում, և սկսւում է մի կռիւ «հայրերի և որդոց» մէջ։ Օրիորդը վրդովւած է մինչև հոգու խորքը, մինչդեռ նրա ծնողների և շրջապատողների համար նրան վրդովեցնող հարցերը անիմաստ, տարօրինակ և անհասկանալի հարցեր են։ Մինչև անգամ օրիորդի մայրը, որի ազդեցութեան շնորհիւ օրիորդի մէջ մասամբ ծագել են այդ հարցերը, մինչև անգամ նա՝ աչքի առաջ ունենալով այն խայտառակութիւնը՝ որ առաջ պիտի գայ այդ մերժման լուրի տարածւելուց, դէմ է կենում։ Հայրը ասում է. «Եթէ Ալֆան մեզաւոր է, եթէ նա ընկել է, նոյն իսկ այդ բանը աչքի առաջ ունենալով՝ պէտք է գնալ նրան օգնութեան, դուրս հանել նրան ուղիղ ճանապարհի վրայ։ Պէտք է սկսել ներումից»... բայց օրիորդը չի շեղւում իր ընտրած ճանապարհից. «Ես չեմ կարող իմ ասածից ետ կանգնել, մի պահանջէք այդ... Այն ամենը, ինչով գրաւում էր ինձ պսակը—աներևոյթացաւ... իմ հաւատը, իմ հոգեկան անդորրութիւնը խորտակւեցաւ... Եւ այդպիսո՞վ ես նոր կեանք սկսեմ։ Ո՛չ, ո՛չ, մեղք է ձեզ համար ինձ այդ խօսքերը ասել անգամ, այդպիսի հիասթափութիւն, այդպիսի ցածութիւն... Ո՛չ, հազար անգամ աւելի լաւ՝ է մնամ առանց ամուսնու..., կըգտնեմ՝ թէ ինչով լցնեմ իմ կեանքը։ Ով համաձայնւի այդ

բանին, ով առաջի անգամից չըհեռացնի իրանից նրան՝ նա ինքը դառնում է նրան մատնակից, կըրելի է կըզտնուեն այդպիսիք, բայց ես ո՛չ, ես ո՛չ»։— «Բայց իրաւացի ես արդեօք դու, որ սիրոյ գործի մէջ մի տեսակ խիստ պահանջմունքներով ես մօտենում թէ տղամարդոց և թէ կանանց», հարցնում է օրիորդին Հօրեղբայը Նորդանը, որը՝ թէև համաձայնում է օրիորդի գաղափարակիցը ընդհանրապէս, այնուամենայնի դէմ է նրան՝ այս խնդիրներում։—«Անպայման». վրայ է բերում իսկոյն օրիորդը։—«Անպայմանն, հեգնում է Նորդանը, գնա՛ բոլորից հարց և փորձ արա՛. հասցրածներիդ իննսունն և իննը կասեն քեզ «ոչ» մինչև անգամ կանայք։ Օրիորդը դարձեալ անշեղ է, չընայած այս ամենին՝ այս խօսակցութիւնն ունենում է օրիորդի վրայ մեծ ազդեցութիւն նրա համար, որ այստեղ նա իմանում է իր հօր անհաւատարմութեան մասին. վերջինս դաւաճանում էր իր կնոջը մի ինչ որ անգլուհու համար։ Օրիորդը միանգամից ճնշուած է. «Մի՞թէ և հա՛յրս, ոչ, ոչ, այդ անկարելի է», բացագանչում է նա, բայց ի զուր։

Նոյնպէս անպատուղ են մնում և Ալֆայի ծնողների խօսակցութիւնները և առաջարկութիւնները. օրիորդը բոլոր ժամանակը լուռ է, իսկ երբ երևում է ինքը Ալֆան՝ օրիորդից պաշտօնապէս բացատրութիւն խնդրելու, օրիորդը՝ նոյնպէս լռութեամբ մօտենում է նրան, և՝ առանց մի որևէ խօսք ասելու՝ շպրտում է նրա երեսին իր ձեռնոցը և դուրս է գնում։

Սրանով վերջանում է պիէսի առաջի կէսը և սկսւում երկրորդը՝ որ ունի բոլորովին ուրիշ ընթացք, քան առաջինը։ Օրիորդը այլ ևս այն չէ, ինչ որ էր նա առաջի երկու գործողութիւններում. երկի տղամարդի երեսին այնպէս ազատ ձեռնոց շպրտողը այսօր ընկճած, ճնշուած է. հօր դաւաճանութիւնը սաստիկ ազդել է նրա վրայ, պատճառ է դարձել նրա մէջ մեծ փոփոխութիւնների։ «Ամենքը գիտէին այդ, ամենքը, բացի ինձանից, ես ուզում էի ամբողջ սարեր շարժել, իսկ ծիծաղի առարկայ դարձայ միմիայն։ Մի խօսիր բարոյականութեան մասին, աղաղակում է նա հօր վրայ, կամ խօսիր այդ բանի մասին նրա հետ... անգլուհու հետ... լռի՛ր, ես ամեն ինչ գիտեմ։ Դեռ երկի, երբ ես շպրտում էի ձեռնոցը՝ ես գիտէի դրա մասին։ Նոյն իսկ այդ պատճառով էլ ես շպրտեցի նրան։ Ես շպրտեցի և՛ քո երեսին և՛ նրա երեսին... Օ՜, ես այլ ևս ոչնչի, ոչնչի չեմ հաւատում։ Դա սարսափելի է, սարսափելի։ Իմ ամբողջ կեանքս այժմ թռուցիկ է ինձ համար։ Ամենավսեմը, ամենաթանգագինը խաւնուած է ցեխի հետ։ Դու խլեցիր ինձնից իմ ընտանիքը... Հաւատարմութիւն, սէր—ոչինչ այլ ևս չըկայ... Ես այլ ևս ընտանիք չ'ունեմ։ Այո՛, երկիւանից ես ուրիշի հարկի տակ եմ»...

Օրիորդը իր մէջ այլ ևս չէ կարողանում գտնել առաջնայ ոյժը դիմադրելու «հայրերից» բաղկացած հակառակ հոսանքին, նա չէ կարողանում մինչև անգամ ուղղակի նայելու Ալֆայի երեսին, և երբ վերջինս գալիս է նրա մօտ դոնէ «յուսալու իրաւունք խնդրելու», օրիորդը չէ կարողանում դրականապէս մերժել նրան, և «պէտք է որ» խօսքերով—որպէս ասում է ինքը իր մօրը—տալիս է Ալֆային իրաւունք յուսալու։ Այդ «պէտք է որ»-ով վերջանում է և ամբողջ կոմեդիան։

Կանգնենք քիչ այդ խօսքի վրայ. դրանով լուսաբանւում է թէ օրիորդի բռնած ընթացքը վերջի գործողութիւնների մէջ՝ մասնաւորապէս և թէ Բիէրնսօնի քարոզած փիլիսոփայական մտքերը՝ ընդհանրապէս։—Օրիորդ Սվաւան իդէալական տիպ է. նրա պահանջները խիստ և անիրագործելի են, ոչ մի երիտասարդ չէ կարող դիմանալ նրանց. ո՛վ է մեղաւոր այդ բանի մէջ։—Մայրերը, որովհետև նրանք չեն կարողանում այնպէս կրթել և այնպիսի ուղղութիւն տալ իրանց որդկերանց, որ վերջիններս կարողանան դիմանալ այդ խիստ պահանջներին։ Եւ ահա, օրիորդ Սվաւան իր զգայուն սրտով հասկացաւ, որ կնոջ կոչումը առայժմ նրանում չէ կայանում, որ նա փախչի այդպիսի տղամարդներից և շպրտի նրանց երեսներին իր ձեռնոցը, այլ նրանում, որ աշխատի տալ կեանքի համար առողջ և բարոյապէս չըփչացած զաւակներ։ Ալֆան՝ ամուսնանալով Սվաւայի վրայ՝ կ'ուղղւի, այդ ամուսնութիւնից առաջացած երեխայքը՝ կրթելով Սվաւայի ազդեցութեան ներքոյ՝ կըստանան այնպիսի ուղղութիւն, որ կարող կըլինեն համեմատաբար աւելի լաւ պահպանել ընտանեկան օջաղի մաքրութիւնը։ Եւ այդպէս՝ սերնդից սերունդ անցնելով՝ վերջապէս աշխարհ կըգան այնպիսի մարդիկ, որոնք կարող կըլինեն կատարելապէս անարատ և մաքուր լինելու, հետևապէս համարձակ կարող են գոհացնել օրիորդ Սվաւայի պահանջմունքները, և ահա այդ ժամանակ կըյայտնւի Բիէրնսօնի ցանկացած ամուսնական օրինակելի զոյգը, և Բիէրնսօնը համոզւած է որ այդ զոյգը ապագայում անպատճառ կըլինի։

Եւ այսպէս՝ մենք տեսանք, որ Բիէրնսօնի յարուցած խնդիրները՝ որքան որ նրանք իդէալական լինեն՝ այնուամենայնի անիրագործելի չեն,

գլխաւոր ցաւը ընտանեկան կրթութեան մէջ է, որ պէտք է բարեփոխի և հաստատ հիման վրայ դրւի։ Այս հարցին մենք գաւեյ դարձեալ դառնանք։

Բայց մի՛ մոռանաք, որ Ձեռնոցը գցած է և գցած է տղամարդի երեսին...

Յ. Գ. Յանկալի է տեսնել «Ձեռնոցը» թարգմանած և գրած հայոց բեմի վրայ, և մենք այս տանկութիւնն ուղղում ենք այն անձանց հասցէին, որոնցից կախած է նրան ի կատար ածելը։

Լ. ՄԵԼԻՔ-ԴԱԴԱՅԵԱՆՑ

ԳԱՌՆԻ-ԲԱՍԱՐ ԵՒ ԽՈՐ-ՎԻՐԱՊ *)

(Հանապարհորդական յիշողութիւններից)

—

Երևանից դէպի Նախիջևան տանող արքունի ճանապարհը ամենից առաջ անցնում է Գառնի-Բասարի գաւառամասի ամբողջ երկայնութեամբ, այնպէս որ ճանապարհորդը պէտք է անցնի յիշեալ գաւառամասի համարեա բոլոր գիւղերի մէջով, իսկ այն գիւղերը, որոնց մէջով չէ անցնում խճուղին, նրանք էլ այնքան մօտ են նրան, որ անցորդը կարող է հեշտութեամբ տեսնել բոլորը։

Օտարոտի երևոյթը, որ իսկոյն աչքի է ընկնում առաջին անգամ այդ գաւառամասի միջով անցնողի համար, մի փոքր տարածութեան վրայ սփռւած, բայց աւելի ճիշտ է ասել միմեանց գլխի կուտակւած, բազմաթիւ գիւղերն են։ Երևակայելը դժւար չէ, թէ քանի խտութեամբ կուտակւած կըլինեն 45 և այն էլ մէջին թիւով հարիւր ընտանիքից ոչ պակաս բնակիչ ունեցող գիւղերը մի տարածութեան վրայ, որ ունի ընդամենը 20—25 վերստ երկարութիւն և 15—20 վերստ լայնութիւն։ Եթէ գիւղերը միմեանցից հաւասարաչափ հեռաւորութեամբ ընկած լինէին, այնքան էլ աչքի չէր ընկնիլ նրանց մօտիկութիւնը միմեանցից մի գիւղը մօտաւորապէս կունենար իրան ամբողջ նստւածքով 9 քառակուսի վերստ շրջատեղի։ Բայց մարդ ապշում է, երբ գնալով մօտ 10 վերստ տարածութիւն, շարունակաբար անցնում է գիւղերի, տների և մարդկային բազմութեան միջով. այդքան կարճ տարածութեան վրայ ճանապարհի երկու կողմով ձգւած են յիշեալ գիւղերից 20-ի չափ, միմեանցից այնպէս անընդհատ կերպով, որ անկարելի է լինում գաղափար կազմել այդ գիւղերի ոչ մեծութեան, ոչ բնակիչների բազմութեան և ոչ այգիների բռնած տարածութեան մասին։ Մարդ անցնում է մի նեղ ճանապարհով, որ երկու կողմից շրջապատւած է կամ տներով կամ բարձր հողէ պատերով։ Մարդու ոչ միայն թոքերն են անազատ զգում այդ լաբիրինթում, այլ և աչքերը, իսկ ուղեղում ամեն ինչ շփոթւած է լինում քաոսի նման։ Ոչ ոքի մտքով չի անցնիլ թէ ինքը Կովկասում—Երևանի նահանգում, հէնց նրա քթի տակին է. տներն իրանց ձևով, մարդիկ իրանց տարազով և մանաւանդ բարբառով սաղ չեն գալիս Արարատեան դաշտի գեղեցիկ բնութեանը. ինչ համեմատութիւն սրանց և Երևանից նոյն չափ հեռաւորութեան վրայ գտնւող հիւսիսային և արևմտեան կողմի գիւղերի մէջ։ Հէնց դրանց անուննները բաւական են մարդուս միտքն ու սիրտը հեռացնելու—շատ հեռացնելու իրան հայրենիքից և մանաւանդ Պարսկաստանի ամենախուլ անկիւնները։ Ո՛ւր Աղամզալու, Ղամարլու, Բաջնալու, Օղուրլեգլու, Թամամլու, Թոխանշալու, Իմանշալու և անվերջ լու-երը և ո՛ւր Աշտարակ, Բիւրակն, Օշական, Վաղարշապատ, Ֆանաքեռ։ Տեսնելով գիւղերի այդպիսի կուտակումն, ես ակամայ մտաբերեցի Հնդկաստանի ազգաբնակութեան անչափ խտութեան մասին լսածս ու կարդացածս և ակամայ հաշւեցի Գանգէսի մի տարւայ ընթացքում ունեցած զոհերի առասպելական թիւերի հետ։

45 գիւղերից 26-ը բնակւած են Հայերով, 12-ը Թուրքերով, 1-ը ռուսադաւան սասրիներով, իսկ մնացած 7 գիւղերը խառնուրդ են այդ երեք ազգութիւնների։ Զուտ հայաբնակ գիւղերից 3—4-ի մէջ կան նաև մի քանի ընտանիք Թուրքեր, ինչպէս և Թրքաբնակ մի քանի գիւղերում կան չնչին թիւով հայեր։ 26 գիւղերում տպրող հայ ազգաբնակութիւնը, մեր ժողոված շատ աւելի ուղիղ աղբիւրից, կազմում է 2580 ընտանիք, ասել է թէ միջին թիւով իւրաքանչիւր գիւղում մօտ 100 ընտանիք։ Աւելացնելով դրա վրայ և 6 գիւղերի ազգաբնակութեան $^1/_3$ մասը (հաշւելով գիւղը նոյնքան բնակիչներով) մօտ 200 ընտանիք, մենք Գառնի-Բասարի ամբողջ գաւառամասի հայ ազգաբնակութեան թիւը կըստանանք 2780 ընտանիք։

Իւրաքանչիւր ընտանիք, եթէ ոչ 10-ը, գոնէ 8 հոգուց բազկացած ընդունելով (իբրև նահապետական ժողովուրդ առհասարակ բազմանդամ ընտանիքներ են կազմում, այնպէս որ ընտանիքը 5 հոգի հաշւել, ինչպէս որ սովորութիւն է, սխալ կըլինէր), կըստանանք 22240 աչքի ընկնող թիւը։ Որպիսի հաշւով սոյն գաւառամասի բոլոր բնակիչների թիւը հաւասարւում է 35,840-ի. ասել է թէ

*) „Տարազի“ № 39-ի մէջ տպագրւել էինք Խոր-Վիրապի պատկերը։

Հայերը կազմում են ամբողջ աղգաբնակութեան համարեա $^2/_3$ մասը։

Հայերը ամբողջապէս գաղթել են Խոյի, Ուրմիի և Սալմաստի գաւառներից 28 թւականի յայտնի գաղթականութիւնների ժամանակ. խօսում են հայերէն շատ աղաւաղած լեզուով. կան նաև 2 թէ 3 հայ գիւղեր, որոնք խօսում են թուրքերէն. պատմում են, որ քահանան անգամ չէր գիտէ հայերէն, եկեղեցում ծանուցումները անում են թուրքերէն լեզուով։

Որքան օտարոտի է այդտեղի աղգաբնակութեան խիտ բնակութիւնը, ոչ պակաս օտարոտի է և նրանց տնտեսական դրութիւնը. և իրաւ, որքան հող կը հասնի ամեն մի ընտանիքին, երբ այդչափ մօտ են միմեանց գիւղերը։ Մի մարդ, որ իր պատմելով ունէր 20 հոգուց բաղկացած ընտանիք, ունի ընդամենը մի խալւար *) հող (մօտ 2 դեսեատին)։ Այդ միևնոյն հողը պէտք է ծառայի նրան և իբրև այգի, և իբրև սեխանոց, և իբրև հացի ու բամբակի արտեր։ 70 թւականին, համեմատաբար աւելի լաւ կացութեան մէջ է եղել այդ գաւառամասի տնտեսական դրութիւնը, այն ժամանակ հողը բաժանելիս են եղել նաֆարի (անդամների թւի համեմատ) և իւրաքանչիւր անդամին հասնելիս է եղել 10 լիդր հող, այդ միևնոյն է թէ 10-ը հոգուց բաղկացած ընտանիքին բաժին է եղել մի խալւար հող, որ այժմ հազիւ հասնում է 20 հոգուց բաղկացած ընտանիքին։

Բայց միևնոյն ժամանակ բոլորիս էլ ծանօթ է Երևանի գաւառի արգաւանդ հողի ոյժը. ուրիշ երկրներում 5 դեսեատին հողը չի կարող արդիւնաբերել այն, ինչ որ այդտեղ կարող է արդիւնաբերել $^1/_2$ դեսեատինը և այդ է պատճառը, որ այդ կողմի բնակիչներն աւելի բարւոք դրութեան մէջ են գտնւում և տնտեսականապէս աւելի հարուստ են, քան թէ նոյն նահանգում գտնւող դիցուք Նոր-Բայազէդի կամ Ալէքսանդրօպոլի գաւառների բնակիչները, որոնք համարեա թէ ամեն տարի բնութեան բերմամբ զրկւում են ամեն ինչից և ստիպւած են լինում օրները քաղցած անցկացնել կամ դիմել այս ինչ ու այն ինչ հայհոյած տեղերը հաց մուրալու մտքով, չընայելով որ գրանց հողի քանակութիւնը համեմատաբար Գառնի-Բասարի հողից շատ և շատ է։ Եւ մի՛թէ հողի այդքան աղքատ արդիւնքով չի բացատրւում և այն, որ Երևանում այգիները բացանելիս կամ թաղելիս չէք գտնիլ, նրանից մի 20 վերստի վրայ ապրող և ոչ մի Գառնի-Բասարցու իբրև մշակ, բայց միևնոյն ժամանակ հրապարակներն ու այգիները լցած կը գտնէք աւելի հեռուից եկող Բարանցի բանւորներով, որոնք բաւականանում են օրական 25—40 կոպէկ օրավարձով։

Բայց արդեօք Գառնի-Բասարի ժողովրդի տնտեսական դրութեան մասին մեր տւած դրական տեղեկութիւնների մէջ սխալւած չենք լինիլ, եթէ նրան փոխանակ համեմատելու Նոր-Բայազէդի ու Ալէքսանդրապոլի աղքատ գաւառների հետ, համեմատենք տնտեսականապէս բախտաւոր դրութեան մէջ գտնւող մի ուրիշ գաւառի հետ, որպիսին մենք ենք հասկանում։ Անցորդի աչքին ելևւում են դրանց այգիները, արտերը, ուր հասնում են համարեա ամեն տեսակ պտուղներ, հացահատիկները, ընդեղէն, բամբակ և այլն, բայց չէ որ դրանք միայն մարդու խաբում են. չէ որ 2 դեսեատին հողի վրայ եթէ ոսկի անգամ բուսներ, բաւական չէր դարձեալ 20 անդամից բաղկացած մի ընտանիքի։ Իսկ եթէ սրա վրայ աւելացնենք և այդքան քիչ հողից վերցրած կալւածատիրոջ բաժինն ու ակցիզային ահագին տուրքերը, այն ժամանակ աւելի ևս վատ գոյներով կը ներկայանայ մեր առաջ Երևանի շրջակայքում գտնւող ինչպէս լիշածս, նոյնպէս և միւս գաւառամասերը։ Գառնի-Բասարի 45 գիւղերից 43-ը սեփականութիւն են այս ինչ կամ այն ինչ բէկի (մեծ մասամբ թուրքերի), որ վեր է առնում իրան իբրև բաժին եկած արդիւնքի 30 բաժնից 3—4-ը, տասանորդից էլ դեռ աւելի. բայց կան և գիւղեր, որոնց տէրերը ստանում են արդիւնքի նոյն չափ բաժնից 7-ը—համարեա $^1/_4$ մասը։ Իսկ ակցիզային տուրքերի քանակութիւնը շատ անգամ ստիպում է այգեպրոջը իր այգին փոխելու հացի կամ բամբակի արտի։ Մի մարդ պատմում էր, որ ինքը տարեկան 1200 մանէթ մենակ ակցիզի է տալիս, այնպէս որ քաշած օղիից համարեա օգուտ չունի, գինին նոյնպէս ոչ մի օգուտ չի տալիս, որովհետև այնտեղից չէ արտահանւում, եղածը սպէտք է մսխի գաւառում, իսկ այնտեղ գինու ժողովրդականութիւնն անհաւատալի է։

Ամբողջ գաւառամասում միայն երկու գիւղեր են ազատ բէկերի սեփականութիւնից—Արտաշար (Արտաշատ) և Իմամշլու, առաջինը 150 և երկրորդը 200 տուն հայ բնակիչներով։ Ինչպէս պատմում են, այդ երկու գիւղերի աղգաբնակութիւնը շատ աւելի բարւոք դրութեան մէջ է, քան մնացած 43 գիւղերինը. մի՛թէ սա մեզ բաւական չէ

*) Ծան. Խալւար ասելով հասկացւում է մի տաբածութիւն, որի վրայ կարելի կլինի ցանել մի խալւար (30 փութ սերմ)։

ցանկալու, որ վերջիններն էլ կարճ միջոցում ազատէին ճորտութիւնից, եթէ կարելի է այսպէս անուանել։

Ամբողջ գաւառամասում միայն Ղամարլու գիւղում կայ հայոց ծխական դպրոց. այդ գիւղը համարւում է գաւառամասի կենդրոնը, ամենից բազմամարդն է—400 տուն բնակիչներով (300 հայ) և համեմատած միւսների հետ՝ աւանի տպաւորութիւն է թողնում մարդու վրայ։

Ղամարլուում կայ և երիտասարդութիւն, որ երբեմն ներկայացումներ է տալիս. այդ պատիւ է բերում ղամարլուեցիներին։ Այդտեղ է գտնւում և փոստային կայարանը։

Այս գաւառամասի վերաբերմամբ մեր ասելիքը կը վերջանայ, եթէ մի քանի խօսք ասենք և Խոր-Վիրապ ուխտատեղու մասին, որ թէպէտ այդ գաւառամասի մէջ չէ գտնւում, բայց համարեա նրա սահմանի վրայ է, Ղամարլուից 7 վերստ հեռաւորութեամբ (Երևանից մօտ 40 վերստ) դէպի հարաւ։ Արարատեան դաշտի մի տափարակ տեղում հէնց Երասխ գետի ափին ցցւած են երեք ժայռոտ և ամայի բլուրներ և այդ բլուրներից մէկի վրայ էլ դէպի վեր է բարձրացած լիշեալ վանքը։ Վանքի մօտ գտնւում է մի անգմբէթ քարաշէն շինութիւն ոչ այնքան մեծ, որ ներսի կողմից նմանութիւն է տալիս մեր հին, բայց փոքր վանքերին. հէնց այդ շինութեան տակ էլ գտնւում է Խոր-Վիրապը, որին, բացի այն, որ իր ուրոշեալ տօներին այցելում է ուխտաւորների ահագին բազմութիւն, այլև իւրաքանչիւր կիրակի և տօն օր ուխտաւորը պակաս չէ լինում։ Թողնելով մի կողմ նրա ներկայ նշանակութիւնը ժողովրդի կրօնական զգացմունքների վերաբերմամբ, թողնելով և նրա պատմական անցեալը, որ համարեա, ամեն մի հայի յայտնի է, ցոյց տանք այն վտանգը, որ ամեն օր սպառնում է Վիրապը այցելող ուխտաւորներին։ Վիրապի խորութիւնը մօտ 3 սաժէն է. իսկ այդչափ խորութիւն իջնելը կատարւում է մի հասարակ փայտէ սանդուղքով, որ դրւած է բոլորովին ուղղահայեաց կերպով և որի փայտիկներն անթիւ ելումուտից լըղկել ու բռնելու համար մինչև անգամ անկարելի են դարձել, նրանով ազատ կարող են իջնել ու բարձրանալ գուցէ գիմնազիստներն ու գինուորները և ոչ թէ մեր ադէ-դադէները, որոնք որքան անշնորհք են այդպիսի քաջագործութիւնների մէջ, նոյնքան շնորհք ունեն ցոյց տալու թէ վանքին այցելողը, եթէ Վիրապը չը մանի, մեծ մեղք գործած կըլինի։

Ես տեսայ ինչպէս մի պատաւ երեք անգամ մտնելով Վիրապը ու դուրս գալով, իր վարմունքը բացատրում էր նրանով թէ Խոր-Վիրապն երեք անգամ մտնողը կընդունւի որպէս մի անգամ Երուսաղէմ գնացած. նրա թոռը, որ մօտին կանգնած էր, շատ սուր կերպով նկատեց. «Նանի, դէ ինն անգամ մտիր այդտեղ և ամեն տեղ ասա թէ երեք անգամ Երուսաղէմ եմ գնացել»։ Ինչպէս պատմեցին այդ սանդուղքից սլքւող և վերընկնող եղել է, բայց միևնոյն ժամանակ Լուսաւորիչը պահպանել է նրան վնասւելուց։ Բայց ո՛րքան յուսախաբ եղած կըլինենք, եթէ մի գեղեցիկ օր, երբ կատարւում է այդտեղի ամենամեծ տօնը և երբ ուխտաւորները ծառերի պէս շարւած մի մի փայտիկից վեր գալիս կամ բարձրանալիս կըլինեն, մէկը վերևից սլքւի և վայր գլորւելով ամբողջ շարքը նրա հետ միասին տարածւի սալայատակի վրայ և այդպիսով քրիստոնեայ ուխտատեղին ականջ կերպով հեթանոս աստւածների պէս մարդկային զոհեր ունենայ։

Գլխաւոր վանքի արևելեան պատի վրայ դրսից կարողացանք կարդալ հետևեալը. «Ս ո ւ ր բ խ ա չ ս բ ա բ ե խ օ ս Խ օ ջ ա Բ ա գ ա մ ի ն և ո ր գ ւ օ յ ն պ ա տ ո ն Ս տ ե փ ա ն ի ն և ա յ լ ո ց ն Թ. ՌՃԾԲ»։ Նրա տակ փորագրւած է մի պատկեր, որ ներկայացնում է Լուսաւորչին նստած աթոռի վրայ, իսկ մի եպիսկոպոս խոյրը գլխին պատկած է նրա առաջ և գլուխը դրած նրա ոտերի մօտ. դրա կողքին գրած է. «Ծ է ր Դ ա ւ ի թ շ ի ն ո ղ և ս պ ա ս ա ւ ո ր ս ո ւ ր բ Վ ի ր ա պ ի»։

Վանքն ոչ իր ջրով և ոչ իր օդով չի կարող գրաւել մարդու։ Միայն տեսարանը ժայռի գլխից շատ գեղեցիկ է։ Նայում էք ընդարձակ հարթ հաւասար դաշտավայրին, ոչինչ չէ ընդհատում ձեր աչքի տեսութիւնը. ձեզանից դէպի հարաւ վեր է բարձրացած—շատ վեր հսկայ Մասիսը իր անբիծ գագաթով նա շատ մօտ է—մօտ 25 վերստ հեռաւորութեան վրայ երևում են մինչև Մասիս ձգւած, մեծ մասամբ թուրք գիւղերը, երևում են Ակռին, Մասիսի պատառւածքը, ձիւնի ու սառույցի ուղղահայեաց կերպով կտրւած շերտերը, որոնց կտորները փայլում են խոր, շատ խոր պատառւածքի միջից։ Երևում է և փոքր Մասիսի կրծքին կպած փոքրիկ անտառը, որ սևին է տալիս հեռւից, որպէս օազն անապատում. երևում են սահմանապահ գինուորների վրաններն ու վրանաբնակ քրդերի շարի շար ընկած, ուղտերի կարաւանին նմանութիւն բերող՝ օբանները, որոնց մէջ վառւող ճրագները փայլփլում են, որպէս հո-

բլզոնի վրայ կրթնած աստղեր, որ պէտք է շուտով անյայտանան տեսադիտնից։ Իսկ ձեր կանգնած ժայռի ստորոտը քերելով Արաքսի ալիքները «միշտ լեղեղուկ, պղտոր ջրով եզերքին, դարիւ դարիւ խփելով վախչում էին լալագին»։ Ո՞րքան հիանալի է բնութիւնը, վերը—եթերում փայլում է լուսինըն իր արծաթափայլ լոյսը շաղ տալով Մասիսի սառոյցի և Արաքսի ջրերի վրայ, այդ երկու նահապետներին կապելով միմեանց. մարդ ապշում է, սարսուռ է անցնում ամբողջ մարմնով, երբ տեսնում է պատմութեան ու անցեալի այդ անխօս վկաներին, որոնք զգալ են տալիս այն, ինչ որ չի ունենալ մարդ ոչ կարդալով, ոչ լսելով։

Ինչպէս լուսընկայ գիշերը և գեղեցիկ անտառը, որ տեռուսի պէս իջնում է սարի ուղղահայեաց գագաթից, մարդուս մէջ դուրս են կանչում սիրոյ զգացմունք կամ կորցրած սիրոյ դառն ու քաղցր յիշողութիւնները, այնպէս և այդտեղ, երբ բարձրանում էք ժայռի գլուխը, դիտում էք շրջակայ դաշտը, նայում նրա սահմանը պարփակող հսկայ լեռանը և նրան գօտևորող ընդարձակ պատմական գետին, վառւում էք մի ուրիշ զգացմունքով, որ կոչւում է հայրենասիրութիւն. այդտեղ մարդու սրտի ամենաքաղցր, ամենանուիրական թեւերն են շարժւում և մարդ ակամայ կերպով սիրում է այն երկիրը, ուր մեծացել, շնչել, խօսել, սիրել, կռւել և մեռել են իր նախնիքը։ Մարդու աչքերից ակամայ կերպով գլորւում են արտասուքի կաթիլները, ստիպելով նրան լաց լինել Մասիսի ծերութիւնը և խառնել իր հեծկլտանքն Արաքսի խեղդւած մրմունջների հետ. մարդ ակամայ կռանում է և հայրենիքի սիրոյ գուշէ առաջին համբոյրով թրջում է հայրենիքի հողը։

Եւ ինչպէս սիրոյ երկրպագուն գալով այդ վանքը, մոռանում է ամեն ինչ, գովում ու երգում է իր սէրը և աղօթում է իր սիրոյ գաղափարին ասելով՝

«Քեզ եմ աղօթում այստեղ ծունկ չոքած,
Քեզ համար եկած իբրև ուխտաւոր.
Մարդկանցից և ոչ մէկն առ Աստւած
Չէ ուղղել այսպէս աղօթք ոչ մի օր»,

այնպէս և ամեն մարդ գնալով այնտեղ, մոռանում է առօրեայ հոգսերը, խօսում է իր զգացմունքների հետ, մաքի թռիչքներ է գործում, գովում ու երգում է իր սէրը և աղօթում է իր սիրոյ գաղափարին—իր հայրենիքին, Մասիսին, Արաքսին։ Այդ ժամանակ միայն մարդ հասկանում է սիրոյ մեծութիւնը, սիրոյ վեհութիւնը։

ՄԻՔ. ՏԷՐ-ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆՑ

ՄԱՏԵՆԱԳՕՏՈՒԹԻՒՆ

ՇԻՐՎԱՆԶԱԴԷ. „Աբսէն Դիմաքսեան“, վէպ („Մուրճ“ 1893 թ. №№ 1—6. և առանձին գրքով)։

Դիմաքսեանի դասախօսութիւնը մի ձեռնոց էր, ձգւած հասարակութեան և մանաւանդ ինտելիգենտ երիտասարդութեան երեսին։ Այդ յարձակումների պատճառով նրա դէմ սկսել էին զինւել նոյն իսկ իր ընկերները, որոնք մի ժամանակ ուխտել էին գործել նրա հետ միևնոյն համոզմունքներով, միևնոյն ուղղութեամբ։ Ընթերցողը զգում է ինչպէս այնտեղ, Դիմաքսեանի սիրոյ չրջանից դուրս, կամաց կամաց թշնամիներ են բարձրանում հերոսի դէմ և այդ թշնամիների խայթոցը պէտք է աւելի զարհեցնի նրա մէջ ապրող վիշապին, քանի որ դա հրապարակական է և հասարակական գործի առիթով։

Առաջին դաւաճանը եղաւ Վ.Էքիլեանը, որ տպագրել էր մի լրագրի մէջ Դիմաքսեանի դասախօսութեան մասին մի յօդւած և այդտեղ սկսնարկել դասախօսի առև կերպարանքի վրայ, որ իբր թէ պատճառ է եղել նրա չարութեան։ Այդ տողերը չափից դուրս վիրաւորեցին Աբսէնին, և հէնց այդ օրը, երեկոյեան թատրոնում, ներկայացման ժամանակ նա սկիտի լսէր և իր վաղեմի դասընկեր հուսարի հեղնական ակնարկը իր նախանձոտութեան և արտաքինի վրայ, սկիտի նայէր ինչպէս Գայիանէին ամբողջատես դրաւել է Բարաթեանով։

Դիմաքսեանի սրտի մէջ չօչափւած էր ամենացաւագար տեղը։ Իսկ երբ նա Գայիանէի հետ խօսելիս ակամայ երեսն է հանում իր տածած զգացմունքը դէպի նա, երբ օրիորդը զգալով իր խօսակցի հոգեկան դրութիւնը, արագ հեռանում է և փախչում է ասկորդ խօսքերից,—ամօթի և բարկութեան զգացմունքները խառնւեցին նախկին դառն կատաղութեան հետ... «երբէք նա այնքան փոքրիկ, ճնշւած և սեղմւած չէր իր աչքում, ոլքան այժմ»։ Սրտի կրակը այնպէս սաստկացել էր որ հեղինակը մեր հերոսի հետ միաժամանակ բացագանչում է.

«Ճնշեցէք, ճնշեցէք այդ ոտնձգող մարմինը։ Նա տածում է իր ներսը դինամիտային մի թունաւոր և պայթուցիկ ոյժ. կըգայ ժամանակ... նա սոսկալի դղրդիւնով դուրս կըժայթքի ոչ միայն անհատների, այլ և ամբողջ հասարակութեան, ժողովրդի, ազգի վրայ, որ ծնում է և սնուցանում է այդ անհատներին...

Այդ երեկոյից յետոյ Դիմաքսեանը վակւեց ինքը իր տանը, նա կատաղած էր ոչ միայն իր հակառակորդների, այլև ամբողջ հասարակութեան, նոյն իսկ մարդկութեան դէմ։ «Ինչպէս նա սառնարիւն կրէր այն բոլոր ատելութիւնները, ծաղրը, արհամարհանքը, որոնց հանդիպում էր ամեն քայլափոխում։ «Նոյն իսկ դպրոցը նա առ ժամանակ հանգիստ էր թողել. նա պատրաստւում էր աւելի ընդարձակ կռւի, ամբողի տպիտութեան դէմ կռւի համար և պատրաստում էր մի նոր գրութիւն «Հասարակութիւն և անհատ» անունով։ Այդ նիւթը զբաղում էր նրա մինչև այդ օրը կրած տանջանքներից։ Այդ ժամանակ Աբսէնին հասաւ Բարաթեանի նշանադրութեան

լուրը. նա գրգռած էր, նա չէր կարող թագցնել այլ ևս ու բացեց Մսերեանին և այդ սէրը, և այն ցնցումները, որ խեղդամահ էին անում իր սիրտը վերջին ժամանակները, ոտնակոխ արած ինքնասիրութիւնը, վտանգուած պատիւը, նախանձը... և ահա այդ խոստովանութիւնից յետոյ նա մացրեց իր յիշատակարանի մէջ։

—Եթէ բնութիւնը իմ այս փոքրիկ մարմնի մէջ դրած լինէր մի փոքրիկ և սառն սիրտ, մի՛թէ աւելի բախտաւոր չէի լինել, ինչո՞ւ այսքան զգայուն եմ, ինչո՞ւ սիրտս լիքն է անզուսպ կրքերով, ոչ—խօլական կրքերով, այլ սիրելու և տառապելու բուռն աւիւնով...

Նա փորձում էր վիշտը մոռանալ, գործերի մէջ խորասուզելով։ Ցանկարծ լսում է որ հայրը մահամերձ հիւանդ է. նա ճանապարհ է ընկնում հայրենի քաղաքը։

Մենք կանգ չենք առնիլ դոռոզ հօր և ոչ պակաս դոռոզ որդու տեսակցութեան վրայ։ Դիմաքսեանի հոգեկան դրութեան փոփոխութեան վրայ աւելի ազդեց մի ուրիշ հանգամանք, այն է՝ գաւառական երիտասարդութեան մի մասի համակրանքը դէպի իր քարոզած գաղափարները։ Այստեղ, ընդհանուր յարգանքի մէջ նա իր յուսահատութեան դարման գտաւ։ «Այստեղ յարգում են, պատւում են և ուշադիր են նրա ամեն մի խօսքին։ Ինչո՞ւ ուրեմն յուսահատուել։ Թող հալածեն, որքան կամենում են, թող թշնամանան, որքան կարող են. մարդ չափ նա չի չեղուել իր բռնած ընթացքից»։ Բայց գաւառական կեանքը ձանձրացնում էր նրան, այստեղ նա չունէր հակաճառող. «նա կարօտել էր հակառակորդների հետ մրցելուն»։ Վերադառնալով Թիֆլիս, նա խոստովանեց Մսերեանին, որ թէև հայրենիքում օձը հանգիստ էր, բայց այդ ոչ թէ նրա համար էր, որ մեռած էր, ո՛չ, այլ նրա համար էր, որ նրան գրգռող չըկար—«ինձ թւում է այդ օձը որքան էլ տանջէ, դարձեալ ինձ կենդանութիւն տուողը նա է»։ Եւ գործելու եռանդով նորից ողողուած Դիմաքսեանի համար աւելի լայն ասպարէզ է բացուում. նրան ընտրում են Ներսիսեան դպրոցի տեսուչ. նա ձեռնարկեց մի շարք փոփոխութիւնների։

Լսելով որ չուտով լինելու է Գայիանէի հարսանիքը, Դիմաքսեանի մէջ նորից զարթնեց օձը, բայց աւելի մեծ ոյժով։ Եւ այդ հէնց այն ժամանակն էր, երբ նա ընդունում էր յարձակումներ իրան հակառակորդ ուսուցիչներից, թէ ժողովներում և թէ լրագրութեան մէջ։ «Այդ յարձակումների թոյնը նա ծծում էր իր սրտի մէջ և յաճախ իր մենութեան մէջ վրդովւում էր սխալ, վայր ի վերոյ, անբարեխիղճ կերպով։ Հարկաւ, նա բոլորին պատասխանում էր»։

Մի առաւօտ. նա կարդաց իր մասին մի ամենակղտոտ ֆելիէտօն՝ «Ողնին Լիւտերի քղամիդով»։ Նա կամեցաւ ծիծաղել, արհամարհել, բայց օձը կատաղել էր։ Ի՞նչ պատասխանել, հարւածը ո՞ր կողմից ուղղել, որ «խոցոտի, վիրաւորի, թաւալգլոր անի հակառակորդին»։ Նրա երեսին գոյն չըկար, նա դողում էր ամբողջ մարմնով և այնքան յուզած դուրս եկաւ տանից որ մոռացաւ վերարկուն և կալոշները հագնել։

Նա զգաց ոտների տակ խոնաւութեան ազդեցութիւն, սեպտեմբեր էր։ Անցնելով Միքայէլեան կամուրջով, նա յանկարծ պատահեց մի չարք կառքերի. առաջինի մէջ նստած էր Բարաթեանը Գայիանէի հետ,—հարսանիքի միւս օրը դրանք դիմում էին երկաթուղու կայարան ճանապարհորդելու համար։ «Դիմաքսեանը ամբողջ մարմնի մէջ զգաց մի տարօրինակ սառնութիւն։ Կարծես, արիւնը նրա երակների մէջ դադարեց վազելուց... Նա ընկճած, ոչնչացած, հրապարակական ծաղրի ենթարկուած, կանգնել էր և նայում էր չքացող բախտի ետևից»։

Դիմաքսեանը մրսեց և հիւանդացաւ։ Տենդի պառանցանքների մէջ, որ մանրամասնօրէն նկարագրում է պ. Շերվանզադէն, նա նորից տանջւում է այն օձից, որ հալածում էր նրան վերջին ժամանակ, վիրաւորանքի այն խորին զգացմունքից, որ մանկութիւնից ի վեր լճանում էր նրա սրտի մէջ և խեղդում էր վերջին ժամանակս նրան։ Ուշքի գալով, նա երեսը դարձրեց ընկերներին և արտասանեց։

—Ես հիւանդ եմ, բժշկեցէք ինձ։

Բայց այդ հիւանդութեամբ նա արդէն կիսով չափ, աւելի ևս բժշկւած էր իր հիւանդութիւնից—չափազանց ինքնասիրութիւնից. այդ կերպը ծայրայեղութեան պիտի հասներ, մինչև վերջը պիտի տանջէր, որպէս զի թուլացած վայր ընկնէր։

ՍՏ. ԼԻՍԻՑԵԱՆՑ

(Կըշարունակուի)

ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Հինդչաբթի. նոյեմբերի 4-ին լոյս տեսաւ Թիֆլիսում «Кавказское Сельское Хозяйство» գիւղատնտեսական թերթի առաջին համարը։ Այդ թերթի նպատակն է տարբացնել գիւղատնտեսական դիտութիւնը Կովկասի գիւղատնտեսների մէջ։ Ինչպէս յայտնի է, մեր գիւղատնտեսների մեծ մասը հայ է, վրացի կամ թուրք և չի հասկանալ այդ հրատարակութեան լեզուն։ Ո՜րքան նպատակայարմար կըլինէր, որ այդ խնամքով խմբագրուած թերթը լոյս տեսնէր և տեղական լեզուներով։

—

ԳԵՂԱՐԻԵՍՏ

ԹԻՖԼԻՍԻ ԳԵՂԱՐԻՆԵՑԱԿԱՆ ՑՈՒՑԱՀԱՆԴԷՍ

Թիֆլիսի պատերազմական թանգարան կոչւած հիմնարկութեան դահլիճում բացւած նկարչական ցուցահանդէսը ուշադրութեան արժանի մի երևոյթ է կազմում ասիական կոպտութեամբ լի մեր պրօզաիկ կեանքում։ Գեղարուեստը մեղանում այնքան քիչ յարգանք է վայելում, գեղարուեստին ծառայող տաղանդները այնքան անուշադիր են թողնւած մեզանում, որ զարմանալի պէտք է համարւեն տեղական նկարիչների փորձերը՝ երևան գալու մի այդպիսի վհատեցուցիչ հասարակութեան դատաստանի առջև։ Այսուամենայնիւ, որքան մեր հասարակութեան ճաշակը անկիրթ լինի, կայ մի փոքրաթիւ դաս, որ կարող է փոքր ի շատէ հետաքրքրուել այն բոլորով, ինչ-որ դուրս է մեր նիւթական-գործնական հեղձուցիչ մթնոլորտից, ինչ-որ մօտ է գեղեցկին, իդէալականին։ Ահա այդ դասի ուշադրութիւնն ենք դարձնում հոկտեմբերի 31-ին բացւած ցուցահանդէսը վրայ։ Իսկ ցուցահանդէսը արժէ ամեն մի կրթւած ճաշակի տէր մարդու համակրութեանը և գնահատութեանը։

Ցուցահանդէսը բաժանւած է եր-

կու մասի՝ որոնցից մէկը կազմում են այսպէս ասած պրօֆեսիոնալ նկարիչների արդիւնքները, միւսը— սիրողների բաժինն է։ Առաջին մասում դրած են մօտ 130 նկարներ, երկրորդում՝ մօտ 100։ Բուն նկարիչների մէջ աչքի են ընկնում պ. պ. Զանկովսկիյ, Բաշինջաղեան, Ստախովսկիյ, Կեղալէն, Շամչինեան, Փիրադեան, Գաբայեվ, Կոլչին, Զախարով և այլն։ Իբրև պէյզաժիչտ ամենից շատ նկարներ ներկայացնում է պ. Բաշինջաղեանը։ Ցատկութեան կողմից աչքի են ընկնում «Սահանայ լիճը», «Անիի Աւերակները», «Անտառը» և «Անձրևից յետոյ» նկարները։ Հայ նկարչի ձիրքը անկասկած օրից օր առաջադիմութիւն է անում։ Նրա վրձինը մանաւորապէս նրբանում է, գոյները քնքշանում, կոլորիտը կատարելագործւում, բայց մի բան աչքի ընկնելու չափ չէ առաջադիմում, այդ նրա տաղանդի, այսպէս ասած, ընդհանուր գաղափարն է։ Բայց այս մասին կը խօսենք յետոյ։

Շնորհքով պորտրետիստ է Գաբայեվը, բայց նրա ոչ մի պատկերը կատարելագործած չէ։ Ամենուրեք երևում է աննեղելի անփութութիւն, երևում է, որ նկարիչը շատ քիչ է խորհում, աշխատում և զարգացնում իր միտքը, մի բան, որ եթէ չարունակւի — պէտք սպանի նրա ձիրքը։

Զանկովսկու բոլոր պէյզաժները ունեն այն բոլոր թերութիւնները, որ յատուկ են մի ծերացած և թուլացած տաղանդի։ Ծերունի նկարիչը այլ ևս չէ կարողանում լաւ ըմբռնել բնութեան տեսարանների կոլորիտի ճշտութիւնը։ Ամեն տեղ լեղակի և արիւնի ու կրակի գոյներ, ահա ինչ աչքի է ընկնում պարոնի նկարների մէջ, այն ինչ՝ նրա կոմպոզիցիան շատ լաւ է, մի բան, որ պէտք է վերագրել թէ նրա հմտութեանը և թէ տաղանդին։

Ստախովսկին չոր նկարիչ է։ Նրա գործերի մէջ չկայ այն վախկոտութիւնը, որ յատուկ է Բաշինջաղեանին և նոյն իսկ Գաբայեվին, բայց տեխնիկան բարձր է թէ մէկից և թէ միւսից։ Կեղալէնը տաղանդաւոր պորտրետիստ է։ Բայց այսքանը բաւական է։ Միւս անգամ կը խօսենք աւելի մանրամասն։

—

ԹԱՏՐՈՆ

Տ. Զաբէլը Ղ. ղլաբուում

Անցեալ սեպտեմբերի 28-ից Ղլաբուում հիւր է դերասանուհի տիկին Զաբէլ և հետը երկու խաղացողներ՝ պ. պ. Ստեփանեան և Աբրահամեան։

Խաղացին ա. «Սանդուխտ» և «Տիկինը նրան սպասում է». բ. «Անբախտ սէր» և «Կուլի պատճառը ես էի». գ. «Մայրական սէր» և չորրորդ՝ ի նպաստ տիկ. Զաբէլի «Անջելօ» ու «Աչնանային երեկոյ գիւղում»։ Խօսել ա. Զաբէլի մասին մանրամասն, կարիք չկայ, քանի որ ամենին յայտնի է նրա խաղը։ Տիկնոջը՝ իր նպաստի դիմերը ընծայեցին ժամացոյցի ոսկէ չղթայ և մի ծրարով էլ 70 ռ. դրամար ու բնեղէնեան կրակներով, կեցցէներով ճանապարհ դրին։

Իսկ ինչ վերաբերում է միւս երկուսին, այդքան կասենք, որ պ. Ստեփանեանը բարեխիղճ խաղացող է, հաճութեամբ կարելի է նայել նրա խաղին և դուցէ լաւ ապագայ է իրան սպասում, եթէ կրթւի ընկնի կանոնաւոր թատերական խմբի մէջ. մենք հազիւ ճանաչեցինք բեմի վրայ հինգ ամիս առաջ տեսած Ստեփանեանին, այնքան նա առաջադիմել է։ Իսկ պ. Աբրահամեանը ոչինչ բանի պէտք չէ իբրև դերասան. նա ոչ մի բան կարգին չըխաղաց և ինչ համարձակութիւն, վերցնել առաջնակարգ սիրահարի դերեր, քանի որ ձայնը կտրած է, հայերէնն խօսալ չըգիտէ, ոչ կանոնաւոր չարժւածքներ ունի, ոչ մանգալ գիտէ բեմի վրայ և որ ամենագլխաւորն է՝ բոլորովին քանքարազուրկ խաղացող է. մենք խիստ ենք վերաբերւում պարոնին, որովհետև «արտիստ» անունն է տալիս իրան և ասում էլ է, որ «ինքը արտիստ է ծնւել»։

Իբրև նոր սիրողներ՝ աչքի ընկան ուսուցիչներ պ. պ. Մուրադբէգեան և Գիւլնազարեան, երկուսն էլ լաւ տպաւորութիւն արեցին։ Լաւ խաղացին նոյնպէս տիկ. Սամւէլեան և օր. օր. Նաղուբեան և Իզմիրեան։ Հինգերորդ ներկայացումը տրւելու է թատրոնի օգտին. յոյս ունենք, դոնէ այժմ կըմասնակցեն մեր այն մի երկու սիրողները, որոնք խնդրելու են սպասում։ Գործ, ապա խօսք։

ԹԱՏԵՐԱՍԷՐ—ԻՆՔՈՊՆԻՏՕ

—

ՄԱՆՐ ԼՈՒՐԵՐ

Արժանաւ. Նահապետ աբեղայ Նահապետեանը, «Նոր-Կար-ի» ասելով գնում է Ալեքսանդրապոլ տեղւոյն յաջորդութեան պաշտօնով։ Նրմիածին է կոչւած դիւղաքահանա Բ. Թամամչեան վանքի կալւածների և դրանց մշակութեան մասին իր կարծիքները յայտնելու։

—

Ինչպէս յայտնի է, գեր. Երեմիա ե. պիսկոպոսի տեղակալութեան օրով նորոգւեցին խուցերը և կառուցւեցաւ նոր սինոդի շինութիւն։ Այժմ արդէն սինոդը տեղափոխւել է նոր շինութիւնը, իսկ էջմիածնի ճեմարանի ըսարանի ուսանողներն անցնելու են հին շինութիւնը։

—

Նոր-Նախիջևանցի վաճառական Գասպար Կարապետ-Օղուլեանը «Прикавказскій Край» թերթի ասելով՝ նպրում է էջմիածնի վանքին մեռոն եփելու համար արծաթէ պղինձ, որի արժէքը 7000 ռուբլի է լինելու։ Պղինձը որի նախագիծը տւել է նկարիչ-ճարտարապետ Պետրով—Բօպետը, չինւելու է Մոսկւայի Խլեբնիկովի յայտնի գործարանում։ Պղինձը պատրաստ կըլինի մինչև եկող տարւայ մայիսը, երբ Վեհափառ Կաթողիկոսը պիտի կատարի ս. Մեռօնօրհնէք։

—

Լրագիրները հաղորդեցին, որ Գեօկչայի գաւառում դտնւող 300 տուն ունեցող Ղալադէ գիւղից 170 տուն հրոյ ճարակ եղաւ։ Այրւել է եկեղեցին և նրա կից ուսումնարանը. 135 պուդ հասարակական ցորենը և 150 պուդ գարին այնպէս է այրւել, որ ոչինչ չեն կարողացել ազատել։ Աւերակների տակից 27 բոլորովին այրւած դիակ են հանել, 8 հոգի պառկած են անկողնում. բաւականաչափ անասուններ են այրւել։ Վնասը հարիւր հազարից աւելի է։ Բագւում հրկիզեալներին օգնելու համար հանգանակութիւն են բացել, որի գլուխ են անցել պ. պ. Հ. Քոչարեան, Բ. Դոլուխանեան, Գ. Տրլդարեան և Գ. Աալանեան. երկու օրւայ ընթացքում հաւաքել են 3,000 ռուբ. և այլ անհրաժեշտ իրեր։

—

Նոյեմբ. 3-ին Թիֆլիսին կոնսիստորիայի նախանդամ արժանաւ. Անանիա վարդապետը Վեհափառ Կաթողիկոսի հրամանով հրաւիրել էր Թիֆ-

լիսի եկեղեցիների երեցփոխներին ու մի քանի ծխականներին հրկիզեալ զալաղեցիներին օգնելու մասին խորհրդակցելու համար։ Ամեն մի եկեղեցուց նշանակելեցան ծխականներ, որոնց իրանց եկեղեցու ծխականների մէջ հանգանակութիւն սկսք է անեն։ Ինքը Վեհափառը իր կողմից մի դումար է նուիրել։

—

Էջմիածնում մտադրութիւն կար միացնելու Ձեմարանի բոլոր լսարանները, որպէս զի Ներկայ ուսանողները միաժամանակ աւարտեն եկող գարնանը և այնուհետև նոր ուսանողները նորից երեք լսարանների մէջ տեղաւորեն։ Այդ մտադրութիւնը թողնուած է մանկավարժական խմբի փաստաբանութիւնների պատճառով և լսարանները չարունակելու են այնպէս, ինչպէս որ էին մինչև օրս։

—

«Մշակին» տեղեկացնում են Էրզրումից, որ Թեթեի խոլերայի հետ միասին սկսել է սարսափելի թանգութիւն, որը սով է գուշակում. Թխած հացի հոխան (3 ֆ.) արժէ 45 կոպ.։ Աւելացրէք դրա վրայ փողի բացակայութիւնը և առևտրի դադարելը։ Բրդական աւազակութիւնը միանգամից դադարեցրել են երթևեկութիւնը և ապրանքների տեղափոխութիւնը։

—

Նոյն Թերթին հաղորդում են, իբրև լուր, որ Բագրևանդի առաջնորդ և ս. Յովհաննու վանքի վանահայր Յովհաննէս եպիսկոպոսի եղբօր աղջկանը հոկտեմբեր ամսին փախցրել են Ջալալի քրդերը և հանդիսաւոր կերպով մահմեդականութիւն ընդունել տալով՝ ամուսնացրել մի քրդի հետ։

—

Շուտով կարգադրելու է, որ ապահովեցրած նամակները այսուհետև ըստ հասցէին յանձնելիս նամակատարները բանան. եթէ մէջը դրամ լինի, այդ դրամը դառնալու է պետական գանձարանի սեփականութիւնը։

—

«Մուրճը» հաղորդում է, որ հայոց գրականական ֆոնդի ծրագիրը, որ մշակել է անցեալ 1892 թ. ընտրած յանձնաժողովը, տրուած է տպագրութեան հասարակութեան մէջ տարածելու համար։ Այդ ծրագիրը քննելու, վաւերացնելու և կառավարութեանը ներկայացնելու խնդրի համար երկրորդ նախապատրաստական ժողովը մտադրութիւն կայ դումարել տպած ծրագիրը ցրուելուց մի կամ երկու չաբաթ յետոյ, հաւանօրէն նոյեմբեր ամսին։

—

Այսօր, քաղաքային վարչութեան դահլիճում կատարելու է Թիֆլիսի քաղաքագլխի ընտրութիւնը։ Իրաւասուների մեծամասնութեան թեկնածուն է պ. Պ. Ա. Իզմայլեանը։

—

Թիֆլիսում վերջին օրերս խոլերայով ոչ մէկ մարդ չի մեռել։

—

Բագուում խոլերան իր զոհերը տանում է բացառապէս մահմեդականներից։

—

Սղնախում սպանուած ուսուցիչ Մարտիրոս Տէր-Յովհաննիսեանի գործը քննուեցաւ հոկտեմբերի 25-ին։ Մեղադրուող իշխան Աբաշիձէին պաշտպանում էր երդուեալ հաւատարմատար Օպոչինին. իսկ այրի կողմից պաշտպան էր երդուեալ հաւատարմատարի օգնական Յովհաննէս Սալենդիևեան։ Դատարանը սպանութեան գործում մեղաւոր ճանաչեց Աբաշիձէին և վճռեց աքսորել նրան զրկելով առանձին իրաւունքներից, իսկ սպանուածի այրուն վճարել տարեկան 180 ռուբլի մեղադրեալի կալուածներից մինչև նրա նորից ամուսնանալը։

—

Ռուսաց հռչակաւոր երաժշտագէտ-հեղինակ Զայկովսկու մահուան առիթով բոլոր ուռս և օտար Թերթերը մեծ յօդուածներ են տպագրում։ Ցուղարկաւորութեան հանդիսի նկարագրութեան և հանդուցեալի կեանքի մանրամասնութիւնները ամեն օր հաղորդում են այդ Թերթերի մէջ։ Նշանաւոր է որ Զայկովսկին վերին աստիճանի մարդասէր էր և զգայուն ու ազնիւ սրտի տէր։

—

Վրաց «Իւերիա» Թերթը լսել է, որ Բորժոմի երկաթուղային ճիւղի վերջացնելուն պէս՝ նոյն ճիւղը կըշահուենալի մինչև Ախալցխան և միևնոյն ժամանակ կըսկսուեն հետազոտութիւնները՝ երկաթուղով Դաբսը Ախալցխայի հետ միացնելու նպատակով։

—

Բժշկական դեպարտամենտը մի չրջաբերականով արգելել է դալլաքներին պարապել ծաղկահատութեամբ և վիրաբուժական մանր օպերացիաներով։ Թիֆլիսի դալլաքների ուստաբաշին դիմեց պ. Նահանգապետին խնդրելով, որ այդ օրէնքը չըտարածւի Թիֆլիսի դալլաքների վրայ, որովհետև վերջիններս մանկութիւնից սկսած այդ արհեստով պարապելով, ոչ մի ուրիշ արհեստ չեն սովորել։ Պ. Նահանգապետը մերժել է այդ խնդիրը։

—

Պարտաւոր են արդեօք մահմեդական հոգևորականները պաշտօնական տեսակներ մտնելիս գլխարկները վերցնել։ Անցեալ տարի Եկատերինոդարի զանձապետը մտել է մի լուսնացի մահմեդական գլխարկը գլխին։ Գանձապետը հրամայել է գլխարկը վերցնել, բայց լուսնցին մերժել է՝ յարելով, որ մահմեդականները պարտաւոր չեն ոչ մի տեղ գլխարկ վերցնելու։ Այս առիթով կազմուեցաւ արձանագրութիւն, որով լուսնցին դատի կանչուեցաւ և հաշտարար դատարարի կողմից՝ ենթարկուեցաւ 40 ռուբլի տուգանքի։ Լուսնցին իր բողոքը տարաւ մինչև կառավարիչ սենատը, որը հոկտեմբերի 2-ին հաստատեց դատաւորի վճիռը և յայտնեց հետևեալ կարծիքը. «Մեղադրեալը (լուսնցին) իր վարմունքով ցոյց է տուել ոչ յարդանք պաշտօնական տեսակին. նա պարտաւոր էր, մտնելով ուսաց պաշտօնական տեսակը, հնազանդել ընդունուած սովորութիւններին։ Մեղադրեալի հիմնուելը մահմեդական կրօնի վրայ այս դէպքում (պաշտօնական տեղերի մէջ գլխարկ չըվերցնելու) անտեղի է, որովհետև նա նկատերինոդարի գանձարանը մտնելով՝ ոչ մի կրօնական ծէս չի կատարել»։ Կառավարիչ սենատը մինչև անգամ քիչ է համարում 40 ռուբլու տուգանքը։ Այսպիսով՝ կառավարիչ սենատի կարծիքով մահմեդականները պաշտօնական տեսակները պարտաւոր են գլխաբաց մտնել։

—

Պ. Կառավարչապետին իրաւունք է տուած ըստ իր հայեցողութեան պինւորական դատաստանին յանձնել նշանաւոր քրէական յանցաւորներին, օրինակ աւազակներին, քաղաքական յանցաւորներին, ապստամբներին, գողերին և այլն։

—

Պետերբուրգում օրինադիծ է մշակւում, որ ծխային հարկը Կովկասում փոխարինւի կալուածական հարկով, որ աւելի համապատասխանում է արդարութեանը։

—

Հայրիկի Օծման օրը փառաւոր հանդիսով բացւեց Ռէչտում առաջին օրիորդաց ուսումնարանը «Երիմեան» անունով։ Աշակերտուհիների թիւը հասնում է 30-ի։

—

Ռուսի դպրոցների հոգաբարձութիւնը յայտնում է իր խորին չնորհակալութիւնը տեղական անգլիական բանկի կառավարիչ հայազգի պարոն Բազելին, որը նուիրել է օրիորդաց նորաբաց վարժարանին 45 թուման. պարսից, նաև յոյն չերամապահ Մօսին Բէգանոսին, որը դպրոցի բացման հանդիսին ներկայ լինելով՝ իր կողմից նուիրել է 10 թուման. այլ և Մոսկվաբնակ Գրիգոր Մարգարեանցին, որից դպրոցը այս տարի ևս ստացաւ 20 ռուբլի երկամեայ մշտական նպաստ դպրոցի։

—

Ռուսի փոստատան կառավարչի վրայ եղած դժգոհութեան լուրը

Թէհրան հասնելով, քննիչ է ուղարկուած գործերը քննելու, բայց ինչ, փոստատունը չատ անկարգ է, ոչ միայն նամակներն են կորչում, այլ մարկաներն անգամ գողանում են։

—

Լոյս տեսաւ «Աղբիւրի» 10-րդ համարը հետեւեալ բովանդակութեամբ. Գիր (ոտանաւոր).—Ա. Ծատուրեան. Զէռը (հին զրոյց).—Ա. Մեհրաբեան. Լոբին, դարմանը և ածուխը—Ս. Աւետեանց. Սխրագործութիւն (լեհերէնից)—Գ. Աստ։ Ո՞հ, երանի թէ... (ոտանաւոր)—*** Յովհաննա դ'Արկ—թարգմ. Արշակունի. Յիսուս Քեթսեմանում (ոտանաւոր)—Գր. ք. Մկըրտումեանց։ Այլևայլք. Լիննէյ—Օր. Մ. Ս.։ Կոյրերի համար լրագիր։ —Հետաքրքրական. Գունաւոր լուսանկարչութիւն—Ց. Վ. Զաբճալիք. Ցուչտ-յուչտ (Մանկական խաղ)—Մ. Տէր-Մարտ։ Հանելուկներ։ Նախընթաց № 9 հանելուկների բացատրութիւնը։

—

ՍՈՒՐՀԱՆԴԱԿ

—

ԹԻՖԼԻՍ. Հ. Թ. „Մշակի“ լուրը, որ „Փ. Վարդազարեանը հրաժարւել է „Մուրճի“ հրատարակելուց“—մեզ վրայ ևս անախորժ տպաւորութիւն թողեց։ Իրաւ, կարծես թէ „Մուրճը“ այլ ևս չըպէտք է հրատարակւի, այն ինչ, ինչպէս „Տարազի“ ընթերցողներին յայտնի է, պ. Փ. Վարդազարեանը ժամանակաւորապէս էր յանձն առել „Մուրճի“ հրատարակութիւնը և ինչ ինչ պատճառներով առաջիկայ յունուարից „Մուրճի“ հրատարակութիւնը նորից անցնում է պ. Ա. Արտեմեանի ձեռքը։ Մենք երբէք չենք կարող ենթադրել, որ այդ լուրը չափ մոլորւած լինէր. „Մշակին“ այդ չէր պէտք։

—

Այն անձանց ազգանունները, որոնցից մեր բաժանորդները կարող են ստանալ «Աղբիւր-Տարազի» երկրորդ հատորը՝ «Վեհափառ Հայրիկի պատկերը»։

Ախալցխա.—Օր. Եղիսաբէթ Տէր-Մովսիսեան։

Արգելին.—պ. Մկրտիչ Ագնաւուրեան։

Աբասթուման.—պ. Աղէքսանդր Զ. Հախնազարեան։

Ալէքսանդրապոլ.—պ. Յովհաննէս Կոստանեանց։

Աստրախան.—պ. Կարապետ Դաւթեան։

Արմաւիր.—պ. Վախթանգ Նալբանդեան։

Ախալքալաք.—պ. Զալալ Յով. Տէր-Գրիգորեան։

Արդահան.—պ. բժ. Թ. Զաքարեան։

Արմեանսկի Բազար.—պ. Սիմէօն Ա.ռ. Բաբիեանց։

Ասխաբադ.—Քահանայ Փանեան։

Ակքերման.—պ. Մայիլեանց։

Աստրաբադ.—Եղբ. Փանեանցներ։

Աստարա.—պ. Գասպար Եղանեանց։

Բագու, Բոլախանի, Սև քաղաք—պ. Մարգար Գասպարեանից։

Բաթում.—պ. Սբէլ Ալբերեանց։

Մեծ-Ղարաքիլիսա.—Հ. Արսէն ա. ք. Տէր-Սիմօնեանց։

Վլադիկաւկազ.—պ. Արտեմ Կիրակոսեան։

Վաղարշապատ.—պ. Պետրոս Սուքիասեան։

Վերին-Ագուլիս.—պ. Սարգիս Հախնազարեան.

Վարշաւա.—պ. Յակոբ Երեսփոխեան։

Գրիգորիոպոլ.—պ. Զատիկեան։

Գորիս.—պ. Աստուր Եօլեանց։

Գորի.—Հ. Ստեփան ա. ք. Տէր-Ստեփանեան։

Զալալ Օղլի.—Ծխակ. դպրոցի պ. աւագ ուսուցչից։

Դիլիջան.—պ. Սարգիս Յովակիմեանից և պ. Արտաշէս Սիմօնեանից։

Դերբենդ.—պ. Սարդար Իսաղուլեանց։

Գանձակ.—պ. Յակոբ Լիսիկեան։

Եկատերինոդար.—պ. Ա. Ն. Թամանցեանց։

Եւպատորիա.—պ. Յ. Բարոնեան։

Իգդիր.—պ. Աստուածատուր Բաբաջանեան։

Կուշչևսկայա.—պ. Գրիգոր Դիլանչեան։

Ղամարլու.—պ. Կ. Սարուխանեան։

Կարս.—Հ. Խորէն ք. Ստամբոլցեան։

Կարաստու-Բազար.—պ. Յով. Բենգլեարեան։

Ղզլար.—Հ. Գէորգ ք. Մկըրտումեան։

Կաղզման.—պ. Զաք. Մ. Զանպոլադեան։

Քութայիս.—Հ. Յովսէփ ք. Ամիրաղեան։

Մոսկւա.—պ. Աղէքսանդր Ծատուրեան (տպարան Մ. Բարխուդարեանի)։

Մոզդոկ.—պ. Գրիգոր Լիսիցեանց։

Մեղրի.—պ. Սիմօն Անանեան.

Մերվ.—պ. Արտեմ Թումանեան։

Մայկոպ.—պ. ագարակատեր Աւետիս Կ. Աւետիսեան։

Նոր-Բայազէտ.—պ. ուսուցիչ Միքայէլ Մնացականեան։

Հին Նախիջևան.—պ. Կոնստանդին Վ. Պօ...սեան։

Նուխի.—պ. Յակոբ Ա.Հարոնեան (փոստատուն)։

Նոր Նախիջևան.—Յովհաննէս սարկ. Զարիֆեան։

Օգեսա.—պ. Պօղոս Կոնսուլով (Բազարնայա փ. տ № 49)։

Պեաթիգորսկ.—պ. Բաղդասար Խոջայեան։

Փոթի.—պ. Յովհաննէս Թիւրքեան։

Պետերբուրգ.—ուսանող պ. Միքայէլ Կուզանեան։

Ռոստով.—պ. Գ. Պ. Խստատեան (Դմիտրևսկայա տ. № 49)։

Սուխում.—պ. Ս. Ֆրանգուլեան.

Սղնախ.—պ. Ագա Զաք. Փրեմուզեան։

Սուսէրոպոլ.—պ. ուսուցիչ Սուքեասեան։

Սարըղամիշ.—եղբ. Չիլինգարեաններ։

Սիմֆերապոլ.—տ. Թէրեզա Սեֆերեան։

Թէհրան.—պ. Սիմելօֆ Մ. Պետրոսեան։

Թաւրիզ.—պ. Աբրահամ Մելիք Աբրահամեան.

Չիկիշլեար.—պ. Բաղիշ Ներսիսեան։

Շուշի.—պ. Պօղոս Զաքարեան։

Շուլաւէր.—պ. Վախթանգ Մեհրաբեան։

Շամախի.—պ. Պօղոս Ներսիսեան։

Երևան.—պ. Գեղէօն Ա.Հարոնեան։

Այս անձանց մօտ նաև ծախւում են «Վեհափառ Հայրիկի» պատկերները—1 ռուբլի,—50 կոպ., և—30 կոպ. և «Գր. Արծրունու» պատկերները—30 կ.

ժամանակ. խմբ. Վ. ՍՈՒԼԹԱՆԵԱՆ

Дез. ценз. Тифлисъ, 6 ноября 1893 г. Հրատ. Տ. Նազարեան. Тип. Груз. Изд. Т-ва. Л.-Мел. ул. д. № 31.